ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՊՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆ - 2019

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Սույն փաստաթուղթը «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ կամ Հիմնադրամ) 2018 թվականի գործունեության հաշվետվությունն է: Տարին արդյունավետ էր ներքին և արտաքին գործունեության ոլորտներում Հիմնադրամի ձեռքբերումների տեսանկյունից:

• ***ՈԱԱԿ-ն ամրապնդում է իր դիրքը երկրում և ճանաչումը եվրոպական կրթական տարածքում:*** Հիմնադրամը շահակիցների կողմից ընկալվում է որպես անկախ և մասնագիտացված կառույց, որն առաջնորդում է որակի արտաքին ապահովման համակարգի զարգացումները և որակի մշակույթի տարածումը ՀՀ-ում միջազգային չափանիշներին համապատասխան: Դա են հավաստում հավատարմագրման գործընթացի արդյունավետության վերլուծությունները, ՈԱԱԿ-ի կողմից իրականացված մշտադիտարկումները և ՈԱԱԿ-ի մասնակցությամբ կազմակերպված բազմաթիվ աշխատաժողովները շահակիցների լայն ներգրավումով:

Իրականացնելով միջազգայնացման իր ռազմավարական նպատակը՝ ՈԱԱԿ-ը 2017թ.-ից Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ է և գրանցված է Որակի ապահովման կառույցների եվրոպական ռեգիստրում (EQAR): ՈԱԱԿ-ը նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցի (CEENQA) անդամ է, ներկայացված է Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQAAHE) կառավարման խորհրդում, անդամակցում է ԱՄՆ Բարձրագույն կրթության հավատարմագրման խորհրդի Որակի միջազգային խմբին (CHEA-CIQG): 2018-ին ENQA է ներկայացվել ՈԱԱԿ-ի՝ արտաքին գնահատման խորհրդատվությունների հիման վրա իրականացված բարելավումների միջնաժամկետ զեկույցը:

• ***2018 թվականին սկսվեց հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլը:***

Հավատարմագրման առաջին շրջափուլի արդյունքում, հանրապետության բուհերում ներդրվել են որակի ներքին ապահովման համակարգեր, մշակվել և իրականացվում են թերությունների վերացման ծրագրեր: Դրանով իսկ հավատարմագրման առաջին շրջափուլը համարվում է ավարտված: Երկու տասնյակից ավել պետական և համեմատաբար մեծաքանակ ուսանողներ ունեցող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ստացել են ինստիտուցիոնալ հավատարմագրում: Նրանց մի մասը ներկայում գտնվում է վերահավատարմագրման փուլում, որի *հիմնական շեշտադրումները կլինեն կրթական ծրագրերի արդիականացումը և որակավորումների շնորհման արժանահավատությունը*:

• ***Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ Հիմնադրամի աշխատանքների շնորհիվ 12 տարածաշրջանային և 60-ից ավել այլ քոլեջներում գործում են որակի ապահովման պատասխանատուներ կամ կենտրոններ***: Բացի ԵՄ բյուջետային աջակցության «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ծրագրի շրջանակում հավատարմագրման գործընթացում գտնվող գյուղատնտեսական ոլորտի 4 քոլեջներից, հավատարմագրման նպատակով արտաքին գնահատման են պատրաստվում ևս 7 ՄՄՈՒՀ:

• ***ՈԱԱԿ-ը խնդիր է դրել մշակել և ներդնել ոլորտային չափանիշներ մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման համար (բժշկական, մանկավարժական, ինժեներական, տնտեսագիտական և այլն)***: Այդ ուղղությամբ իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ: 2018թ. ակտիվ գործունեություն է ծավալվել բժշկական կրթության հավատարմագրման միջազգային չափանիշների տեղայնացման ուղղությամբ: Աշխատանքային հանդիպումներ են տեղի ունեցել մի շարք կազմակերպությունների հետ, որոնք կիրառում են Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի (WFME) հավատարմագրման չափանիշները, միջազգային փորձի վերաբերյալ տեղեկություն է կուտակվում: Ռազմավարական քննարկումներ են կազմակերպվել Երևանի պետական բժշկական համալսարանի հետ և ձեռք է բերվել համաձայնություն համագործակցության ձևաչափի մասին: Նախնական մասնագիտական կրթության ոլորտում Ասիական բանկի մասնագետների հետ համաձայնություն կա հավատարմագրման ընթացքում փորձարկել միջազգային չափանիշները:

• ***ՈԱԱԿ-ը 2018թ. պրոակտիվ ներդրում է ունեցել բարձրագույն կրթության ոլորտում օրենսդրական փոփոխությունների մասով, որի արդյունքում «Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծում զետեղվել են կրթության որակի հետագա զարգացմանը միտված հոդվածներ:*** Նախագծում ՈԱԱԿ-ի առաջարկները վերաբերել են ոչ միայն օրենքի կառուցվածքին, օգտագործվող հիմնական հասկացություններին և առանձին հոդվածներին, այլև կառավարման, թափանցիկության, հետադարձ կապի ապահովման և ինքնաբարելավման մեխանիզմների ներդրմանը ՀՀ կրթական համակարգում: Այդպիսի մեխանիզմներից են լիցենզավորման և հավատարմագրման իրավական հետևանքների կապակցումը, ազգային ուսանողական հարցման և որակավորումների շնորհման միասնական էլեկտրոնային համակարգերի ներդնումը, կատարողականի ցուցանիշների հիման վրա պետության կողմից բուհերի ֆինանսավորման սկզբունքը, կարճաժամկետ երկրորդ բակալավրական կրթության հնարավորության ընձեռումը և այլն:

• ***Ինստիտուցիոնալ հավատարմագրման նոր շրջափուլում ՈԱԱԿ-ը շեշտադրում է բուհերում իրականացվող բոլոր կրթական ծրագրերի և շրջանավարտների ռիսկերի կառավարումը:*** Այդ խնդիրը ՈԱԱԿ-ի կողմից կարևորվել է 2018թ. ապրիլին անցկացված «Կրթություն և մասնագետ. մասնագիտական կրթությունն այսօր և վաղը» որակի ապահովման հերթական՝ 4-րդ ֆորումում: Համաժողովի մասնակից ՀՀ բուհերի և քոլեջների 300-ից ավել ներկայացուցիչներ քննարկել են ոլորտի խնդիրներն ու մարտահրավերները: ՈԱԱԿ-ը ներկայացրել է որակի ապահովման համակարգերի գործունեության լավ փորձի օրինակներ և իր ակնկալիքները հավատարմագրման երկրորդ շրջափուլից: Ֆորումից հետո անցկացված արդյունքների գնահատումը (գնահատմանը մասնակցել է 96 մարդ) ցույց տվեց, որ այն արդարացրել է մասնակիցների 83.7%-ի ակնկալիքները, 84.7%-ի գնահատմամբ արդյունավետ է եղել, 80%-ի մոտ նպաստել է նոր գիտելիքների ձեռքբերմանը հետագա անելիքների և ծրագրերի իրականացման, այսօրվա մասնագիտական կրթության խնդիրներն ավելի լավ հասկանալու, մարտահրավերների լուծումներ գտնելու, նոր պրակտիկ գիտելիք[HB1] ձևավորելու, փորձի փոխանակման և որակավորումների արժանահավատ շնորհման առումով:

• ***Որակի ապահովման միջազգային կառույցներին անդամակցությունը և նրանց հետ սերտ համագործակցությունը մեծացրել են ՈԱԱԿ-ի տարածաշրջանային ազդեցությունը:*** Համագործակցության պլաններ են մշակվում ՌԴ, Ղազախստանի, Վրաստանի հետ համատեղ գործողությունների վերաբերյալ: ԼՂՀ Կրթության, գիտության և սպորտի նախարարության աջակցությամբ Արցախի բուհերում որակի ապահովման համակարգերի ներդրմանն ուղղված վերապատրաստումներ և խորհրդատվություններ են իրականացվել: Իրազեկման աշխատանքներ են իրականացվում Արցախի բոլոր համալսարանների հետ որակի ներքին ապահովման համակարգերի ներդրման ուղղությամբ:

• ***Հայաստանի ուսանողների ազգային ասոցիացիայի, ուսանողական կառույցների և առանձին ուսանողների հետ ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» ցանցի համագործակցության շնորհիվ մեծացել է ուսանողների, որպես մասնագիտական կրթության հիմնական շահակիցների, մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին:*** Դրան մասամբ նպաստել է նաև ՈԱԱԿ-ի, ԿԳՆ-ի և ՀՈՒԱԱ-ի համագործակցության շրջանակներում ստեղծված Ազգային ուսանող-փորձագետների անկախ մարմինը, որն ապահովում է ուսանող-փորձագետների հավաքագրման գործընթացի թափանցիկությունն ու կայունությունը: Նախաձեռնության շրջանակում ՈԱԱԿ-ի պատասխանատվությունն է ուսանող փորձագետների պատրաստումը: 2018թ. ընթացքում «Ուսանողության ձայն» նախագծի կողմից վերապատրաստվել են 29 ուսանող-փորձագետներ, որոնք ընդգրկված են հավատարմագրման գործընթացներում, ինչպես նաև թեմատիկ վերլուծություններում:

Հաշվետու տարում ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլի ավարտին ուսանող-փորձագետների ակտիվ մասնակցությամբ նախագիծը իրականացրել է Հավատարմագրում անցած ուսումնական հաստատությունների փորձագիտական զեկույցների համեմատական վերլուծություն: Հետազոտությունը հրապարակված է ՈԱԱԿ պաշտոնական կայք-էջում: Հետազոտությունը նպատակ էր հետապնդում վեր հանել ուսումնական հաստատություններում առկա այն ընդհանուր խնդիրները, որոնք բացահայտվել էին հավատարմագրման գործընթացներում:

• ***ՈԱԱԿ-ը, խթանելով որակի համակարգի ներքևից վերև ձևավորման քաղաքականությունը, ընդլայնում է շահակիցների երկխոսությունը դասավանդման-ուսումնառության համակարգային խնդիրների վերաբերյալ:*** Որակի ապահովման համակարգերի ներդրմանը և զարգացմանը, ինչպես նաև ռազմավարական պլանավորմանը, ինքնավերլուծության իրականացմանը և գնահատման համակարգի բարելավմանն են ուղղված եղել շահակիցների ներգրավմամբ աշխատաժողովներին իրականացվող բաց քննարկումները և տրամադրվող խորհրդատվությունն ու աջակցությունը: Հաշվետու տարում ՄՈՒՀ-երի աշխատակիցների համար կազմակերպվել են ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը և կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ, որոնց ընթացքում ընդհանուր առմամբ վերապատրաստվել է 96 մասնագետ, ընդ որում բուհերից՝ 53 հոգի, քոլեջներից՝ 43 հոգի: Ռազմական ուսումնական հաստատությունների 42 աշխատակիցների համար կազմակերպվել է 7 աշխատաժողով: ԵՄ ծրագրով նախատեսված վերապատրաստում է անցկացվել 4 գյուղատնտեսական քոլեջների համար: Վերապատրաստումներից հետո իրականացված արդյունավետության գնահատումը

ցույց է տվել, որ ՄՈՒՀ-երի աշխատակիցների ավելի քան 80% բավարարված է ՈԱԱԿ-ում անցկացվող վերապատրաստումներից:

• ***ՈԱԱԿ-ը վերամշակել է տեղեկատվության էլեկտրոնային բազան, որտեղ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները պարբերաբար ներկայացնում են իրենց գործունեության արտաքին գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվություն:*** Արդյունքում ձևավորվել է հաստատությունների ավելի պատասխանատու վերաբերմունք տվյալների և կառավարման փաստաթղթերի նկատմամբ:

• ***Ընդլայնվել են բուհերի և ՄԿՈՒ հաստատությունների արտաքին գնահատում իրականացնող փորձագետների հաշվառման առցանց բազաները:*** Ներկայումս փորձագետների բազաներում ընդգրկված են 600-ից ավել տեղացի և միջազգային մասնագետներ: Փորձագետների ընտրության համար կիրառվում են խմբային վերապատրաստումներ, ինչպես նաև փորձագետին անհրաժեշտ կարողություններ ձևավորող դերային խաղերի մեթոդաբանությունը ուսանող փորձագետների ներգրավմամբ:

Հավատարմագրման ընթացքում հիմնավորված, անկախ և անկողմնակալ փորձագիտական գնահատում ապահովելու համար ՈԱԱԿ-ը վերապատրաստումներ է կազմակերպել նաև փորձագետների համար: Հաշվետու տարում վերապատրաստումներին մասնակցել է ՈԱԱԿ-ի փորձագիտական բազայում գրանցված 45 մասնագետ: Վերապատրաստվածներից 18-ը բուհերից են, 3-ը Կրթության ազգային ինստիտուտից, մնացածը քոլեջների աշխատակիցներ են:

2018 թ. փորձագետների հավաքագրման համար մշակվել է նոր քաղաքականություն, որի համաձայն ՈԱԱԿ-ում կազմակերպվել են թեմատիկ հանդիպումներ բուհերի աշխատակիցների հետ, անցկացվել են կլոր սեղաններ. աչքի ընկած մասնագետներին առաջարկվել է գրանցվել փորձագետների բազայում և մասնակցել վերապատրաստումների:

• ***«Որակի ապահովման աջակիցների» ցանցը շարունակում է գործել որպես ոլորտի խնդիրների քննարկման և փորձի փոխանակման հարթակ***: Ցանցը միավորում է 20 քոլեջ և 14 բուհ ներկայացնող 247 մասնագետների: Քոլեջների ներկայացուցիչ ցանցի անդամների համար աշխույժ շփումների հարթակ է դարձել նաև ֆեյսբուքում ՈԱԱԿ-ի կողմից ստեղծված «Որակի աջակիցներ» անվամբ փակ խումբը: Բուհերի աշխատակիցների մասնակցությունը ցանցի աշխատանքներին դեռևս պասիվ է:

• ***ՈԱԱԿ-ը խթանում է բուհ-գործատու շահակիցների համագործակցությունը կրթության որակի ապահովման համատեքստում***: Մոդելը հավանության է արժանացել շահակիցների կողմից, և որպես լավ փորձի օրինակ 2018թ. ներկայացվել է եվրոպական գործընկերներին ENQA-ի համաժողովում: Մոդելը քննարկվել է ՈԱԱԿ-ի որակի ապահովման 4-րդ ֆորումի ընթացքում և «ՄԿՈՒ-գործատու համագործակցություն. համատեղ ռազմավարության բանաձև» խորագրով համաժողովի շրջանակներում:

Սույն փաստաթղթում ներկայացվում են հաշվետու տարում կատարված աշխատանքներն՝ ըստ ՈԱԱԿ-ի գործունեության 2016-2020թթ. Ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

1. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 6

Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացում 8

Գրառումներ հավատարմագրման պետական գրանցամատյանում 9

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների կազմակերպում 9

Ծրագրային հավատարմագրման գործընթացների կազմակերպում 11

Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհերի ծրագրեր 12

Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ 12

Մշտադիտարկումների իրականացում 13

2. ՈԱԱԿ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՃԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 18

Մարդկային ռեսուրսների կառավարում 24

ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների պարբերական գնահատում 27

Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում 28

3. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 30

4. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 33

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2016-2020թ.թ. Ռազմավարական ծրագրում սահմանված են ՈԱԱԿ-ի գործունեության գերակայությունները.

1. բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերի արդիականացում և որակի բարելավում,
2. միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ներքին ապահովման համակարգերի ներդրում,
3. Հիմնադրամի ռեսուրսների զարգացում և կայունության ապահովում,
4. Հիմնադրամի գործունեության միջազգայնացում:

Ելնելով սահմանված տեսլականից և գերակայություններից՝ ՈԱԱԿ-ն իր առջև դրել է հետևյալ նպատակները.

1. Հիմնադրամի գործունեությամբ զգալիորեն նպաստել մասնագիտական կրթության որակի ապահովմանը,
2. լինել վստահելի կազմակերպություն բոլոր շահակիցների համար,
3. դառնալ միջազգայնորեն ճանաչված կազմակերպություն:

Ստորև մանրամասն ներկայացվում են ՈԱԱԿ-ի ձեռքբերումները Ռազմավարական ծրագրի 2018թ.-ի համար նախատեսված աշխատանքների վերաբերյալ՝ ըստ գործունեության հիմնական նպատակների:

1. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

«ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի» համաձայն՝ ՀՀ-ում մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովումն իրականացվում է պետական հավատարմագրման երկու գործընթացներով՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում և մասնագիտության կրթական ծրագրի (ծրագրային) հավատարմագրում: Պարբերաբար իրականացվող անկախ հավատարմագրումների միջոցով ՈԱԱԿ-ը հավաստում է ՀՀ-ում գործող մասնագիտական ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի համապատասխանությունը հավատարմագրման չափանիշներին, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետությունը և մատուցվող կրթական ծառայությունների որակը՝ դրանով իսկ ապահովելով հասարակության վստահությունը կրթական համակարգի նկատմամբ: ՀՀ մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովման գործող համակարգը ներկայումս ոլորտում բարեփոխումների իրականացման հիմնական մեխանիզմներից է: Հավատարմագրման գործընթացի արդյունավետության գնահատման արդյունքների հիման վրա կարելի է փաստել, որ գործընթացները շոշափելի ազդեցություն ունեն ՄՈՒՀ-երի կառավարման մոտեցումների բարելավման վրա:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը 2018թ.-ին մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովման ուղղությամբ ըստ ռազմավարական նպատակների իրականացրել է հետևյալ գործունեությունը.

Նպատակ 1.1. ՄՈՒՀ-երի և դրանցում իրականացվող կրթական ծրագրերի՝ Հիմնադրամի կողմից կազմակերպված գնահատումները հիմք են որակի հավաստման և բարելավման համար:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր.

- ապահովել փորձաքննությունների իրականացումը հանրության շահերն արտացոլող չափանիշների և չափորոշիչների հիման վրա,
- կազմակերպել ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացներ՝ ապահովելով ուսանողների գերակշիռ մասի շահերը,
- իրականացնել այնպիսի փորձաքննություններ, որ ՄՈՒՀ-երը որակի բարելավման իրենց գործողություններն իրականացնեն այդ գնահատումների հիման վրա՝ գիտակցելով դրանց օգտակարությունն իրենց համար:

ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման գործող չափանիշների կիրառելիության և արդյունավետության վերաբերյալ ՈԱԱԿ-ը պարբերաբար տեղեկատվություն է հավաքում ուսումնական հաստատություններում ինքնավերլուծություն իրականացրած աշխատակազմի և որակի ապահովման ստորաբաժանումների ներկայացուցիչներից, վերապատրաստումների մասնակից, ինչպես նաև փորձագիտական խմբերում ընդգրկված մասնագետներից: Բուհերի ներկայացուցիչները, հիմնականում չափանիշները համարելով ունիվերսալ և կիրառելի, որոշ չափորոշիչների վերաձևակերպումների և փոփոխությունների անհրաժեշտություն են տեսնում:

Չափանիշների մեկնաբանության առանձին քննարկումներ են կազմակերպվել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների և աշխատակիցների հետ:

Հավատարմագրման դիմած ՄՈՒՀ-երի հետ տարվել են չափանիշների կիրառության պարզաբանման աշխատանքներ, և բոլոր գործընթացներում կիրառվել են գործող չափանիշները և հաստատված ընթացակարգերը:

ՈԱԱԿ-ը խնդիր է դրել մշակել և ներդնել ոլորտային չափանիշներ մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման համար (բժշկական, մանկավարժական, ինժեներական և այլն): Այս չափանիշների ներդնումը անմիջապես կապված է ՀՀ Որակավորումների ոլորտային շրջանակների մշակման հետ, ինչին ձեռնամուխ է եղել ԿԳՆ-ն, սակայն գոյություն ունի միջազգային լավ փորձ, ինչին ձգտում է հետևել ՈԱԱԿ-ը:

2018թ. ակտիվ գործունեություն է ծավալվել բժշկական կրթության հավատարմագրման միջազգային չափանիշների տեղայնացման ուղղությամբ: ENQA-ի տարեկան համաժողովի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել մի շարք կազմակերպությունների հետ, որոնք կիրառում են Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի (WFME) հավատարմագրման չափանիշները: Քննարկումներ են կազմակերպվել Երևանի պետական բժշկական համալսարանի հետ:

Ղազաստանի Կրթության և առողջապահություն որակի ապահովման և հավատարմագրման եվրասիական կենտրոնի (ECAQA) հետ ՈԱԱԿ-ը պատրաստում է հուշագիր, որով նախատեսվում է համագործակցություն հետևյալ ուղղություններով՝

1. ECAQA-ն կիսվելու է իր մշակումներով և բժշկական կրթության հավատարմագրման միջազգային չափանիշների տեղայնացման փորձով,
2. Որակի արտաքին ապահովման կառույցները փոխանակվելու են բժշկական մասնագիտական կրթության հավատարմագրման փորձերով:

Ինչ վերաբերում է ՄՈՒՀ-երի տարբեր օղակների ներկայացուցիչների հետ ՈԱԱԿ-ի նախաձեռնած ծրագրային հավատարմագրման չափանիշների մեկնաբանության և կիրառության քննարկումներին, ապա դրանք ժամանակավորապես դադարեցվել են: 2018թ. ԿԳՆ-ի կողմից չի հրապարակվել Որակավորումների ոլորտային որևէ շրջանակ, իսկ ծրագրային հավատարմագրման չափանիշների մեկնաբանության և վերանայման անհրաժեշտության քննարկումները կշարունակվեն դրանց մշակումից հետո:

Ուսումնական հաստատությունները, անկախ մասնագիտական առանձնահատկություններից, համարում են, որ հավատարմագրման չափանիշները բավական ունիվերսալ են և կիրառելի:

Հավատարմագրման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով ՈԱԱԿ-ը խնդիր է դրել մշակել և ներդնել ոլորտային չափանիշներ մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման համար (բժշկական, մանկավարժական, ճարտարագիտական, տնտեսագիտական և այլն):

Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացում

2015 թվականի փետրվարից սկսած ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովը կայացնում է որոշումներ հավատարմագրման գործընթացների վերաբերյալ: 2018 թվականին Հավատարմագրման հանձնաժողովի կայացրած որոշումներով 4 և 2 տարի ժամկետներով ինստիտուցիոնալ հավատարմագրում է շնորհվել 7 բարձրագույն ուսումնական հաստատություններին, այդ թվում ՀՀ ՊՆ 2 ռազմական համալսարաններին: Դրանով իսկ ավարտվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին փուլը:

Որոշումները կայացվել են հետևյալ ուսումնական հաստատությունների վերաբերյալ՝

	Հաստատության անվանումը	Շնորհված հավատարմագրումը
1	Եվրոպական համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով
2	Գորիսի պետական համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով
3	Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
4	Հյուսիսային համալսարան	ինստիտուցիոնալ վերահավատարմագրում 4 տարի

		ժամկետով
5	ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
6	ՀՀ ՊՆ մարշալ Ա.Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
7	Եվրասիա միջազգային համալսարան	ինստիտուցիոնալ վերահավատարմագրում 4 տարի ժամկետով

Գրառումներ հավատարմագրման պետական գրանցամատյանում

ՈԱԱԿ-ը վերոնշյալ յոթ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրումների մասին գրառումներ է կատարել հավատարմագրման պետական գրանցամատյանում (տես ՈԱԱԿ-ի http://www.anqa.am հասցեով կայքէջը):

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների կազմակերպում

2018թ.-ին իրականացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ 7 բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Հայաստանի գեղարվեստի պետական և Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիաներում, Հյուսիսային համալսարանում, Գորիսի պետական, Եվրասիա միջազգային համալսարաններում, ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվ. ռազմական և Մարշալ Ա. Խանփերյանցի անվ. ռազմական ավիացիոն համալսարաններում:

Նախկինում պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած Հյուսիսային համալսարանը և Եվրասիա միջազգային համալսարանը վերահավատարմագրման արդյունքում ստացել են ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով:

ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի հաստատած «Փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան՝ ձևավորվել և ուսումնական հաստատությունների հետ համաձայնեցվել են փորձագիտական խմբերը: Յուրաքանչյուր փորձագիտական խմբում ընդգրկվել են 3 տեղացի, 1 միջազգային փորձագետ և 1 ուսանող: Որպես միջազգային փորձագետներ ընտրվել են՝

- **Իրինգ Վասեր -** Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Հավատարմագրման և Որակի ապահովման ցանցի (CEENQA) նախագահ, Գերմանական ASIIN հավատարմագրման գործակալության գործադիր տնօրեն, պրոֆեսոր (Հյուսիսային համալսարան),
- **Լուսիեն Բոլաերթ -** Բրյուսելի համալսարանի պրոֆեսոր, Որակի ապահովման Եվրոպական գրանցամատյանի (EQAR) գրանցման հանձնաժողովի փոխնախագահ, հավատարմագրման բելգիական AEQES գործակալության խորհրդի անդամ Անտվերպենի համալսարանի պրոֆեսոր (Եվրոպական համալսարան),
- **Միեչեսլավ Սոխա** – Լեհաստանի հավատարմագրման հանձնաժողովի փոխնախագահ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր (Եվրասիա միջազգային համալսարան),
- **Ալեքսանդր Կրյաչկո -** «Ս. Պետերբուրգի աէրոտիեզերական սարքաշինության պետական համալսարանի» ռադիոտեխնիկական և օպտոէլեկտրոնային համակարգերի

ամբիոնի վարիչ, տեխ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ հավատարմագրված փորձագետ, (ՀՀ ՊՆ մարշալ Ա.Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան),

- **Բարտլոմեյ Պոուչեկ** - Լեհաստանի ռազմածովային ակադեմիայի Հրամանատարության և ծովային գործողությունների ֆակուլտետի փոխդեկան, անվտանգության գիտությունների դոկտոր (ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարան),
- **Լոնգմուս Յորգ** - Գերմանական ASIIN հավատարմագրման գործակալության խորհրդի անդամ, Բեռլինի Բեութի տեխնիկական համալսարանի պրոֆեսոր (Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա),
- **Հերբերտ Յոհան Լոռենց Գրյուներ** – Բրեմենի գեղարվեստի համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր (Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա),
- **Բրուվայլեր Հանս-Քրիստիան** – Գերմաիայի Զվիկաու քաղաքի կիրառական գիտությունների արևմտյան սաքսոնական համալսարանի պրոֆեսոր (Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա),
- **Մաչեի Մարկովսկի** - կրթության կառավարման ոլորտի գիտությունների թեկնածու, Լեհաստանի հավատարմագրման հանձնաժողովի որակի ապահովման փորձագետ (Գորիսի պետական համալսարան):

Ըստ Հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգի և հաստատված ժամանակացույցի՝

1) իրականացվել են ինքնավերլուծությունների ու կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն և փորձագիտական այցեր ուսումնական հաստատություններ;
2) սահմանված ժամկետներում կազմվել են փորձագիտական խմբերի նախնական զեկույցները և տրամադրվել բուհերին: Բուհերի առարկությունները հաշվի առնելով՝ լրամշակվել են վերջնական զեկույցները;
3) փորձագիտական զեկույցներում տրված խորհրդատվությունների հիման վրա ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերը մշակել են թերությունների վերացման ծրագիր, որոնք գնահատվել են նույն փորձագիտական խմբերի կողմից, և կցվել Հավատարմագրման հանձնաժողովին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին՝ որոշման կայացման համար:

Քանի որ Հավատարմագրման կարգով 2018թ. դեկտեմբերի 30-ը սահմանված է ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմելու վերջնաժամկետ, ապա ՈԱԱԿ-ը ստացավ աննախադեպ մեծ թվով դիմում-հայտեր՝ 17 բուհից և 3 քոլեջից: Դրանք հիմնականում հավատարմագրման երկրորդ շրջափուլի դիմած պետական բարձրագույն ուսումնական հաստատություններն են, բայց կան նաև ոչ պետական 7 բուհ և 1 բուհ Արցախի հանրապետությունից:

Այդ հաստատությունների հավատարմագրման գործընթացները պլանավորված են մոտակա մեկ տարի ժամանակահատվածի համար:

2018 թվականին սկսվեց հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլը: Երկու տասնյակից ավել պետական և համեմատաբար մեծաքանակ ուսանողներ ունեցող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ստացել են ինստիտուցիոնալ հավատարմագրում: Նրանց մի մասը ներկայում գտնվում է վերահավատարմագրման փուլում, ***որի հիմնական շեշտադրումները կլինեն կրթական ծրագրերի արդիականացումը և որակավորումների շնորհման արժանահավատությունը:***

Միջազգային ծրագրերով աշխատանքներ

ՈԱԱԿ-ը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցի (CEENQA) անդամակցության շրջանակներում արտաքին գնահատում է իրականացրել Ուկրաինայի Չեռնովցի ազգային համալսարանում: Գնահատվել են երկու մասնագիտության կրթական ծրագրեր՝ «Կիրառական մաթեմատիկա» և «Անգլերեն լեզու և գրականություն»: Արտաքին գնահատում իրականացնող փորձագիտական խմբում ՈԱԱԿ ներկայացուցիչներն ընդգրկված են եղել որպես միջազգային փորձագետ և արտաքին գնահատման գործընթացի համակարգող:

Ծրագրային հավատարմագրման գործընթացների կազմակերպում

Եթե 2014թ. ՀՀ Կառավարության որոշմամբ հստակեցվեցին ինստիտուցիոնալ հավատարմագրումների ժամկետները և նոր կարգով հավատարմագրման դիմելու վերջնաժամկետը, ապա ծրագրային հավատարմագրումը դեռևս մնում է կամավոր գործընթաց ուսումնական հաստատությունների համար:

ՈԱԱԿ-ի փորձագիտական խմբերն ինստիտուցինալ հավատարմագրման շրջանակներում իրականացնում են 3 կրթական ծրագրերի գնահատումներ և խորհրդատվություններ են տրամադրում դրանց բարելավման ուղղությամբ: Փաստացի իրականացված 32 հավատարմագրումների շրջանակներում ուսումնասիրվել են շուրջ 100 կրթական ծրագրեր, մինչդեռ դրանց թիվը 600-ից ավել է: Հավատարմագրման երկրորդ շրջափուլի ընթացքում ՈԱԱԿ-ը տեղեկություն է հավաքելու հաստատությունների կողմից իրականացվող բոլոր կրթական ծրագրերի մասին և փորձելու է կազմակերպել ավելի մեծ քանակով կրթական ծրագրերի փորձաքննություն:

2018թ. ձեռքբերումներից է, որ ՈԱԱԿ-ի առաջարկության հիման վրա «Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծում ներդրվել է ծրագրերի խմբային հավատարմագրման ձևը, որը ուսումնական հաստատությունների ֆինանսական սուղ ռեսուրսների պայմաններում կարող է կարճ ժամանակամիջոցում նպաստել մասնագիտական կրթության որակի բարելավմանը:

Բուհերի հետ քննարկվել է նաև ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումների համատեղ կազմակերպման հնարավորությունը, երբ ընդլայնված կազմով փորձագիտական խումբը ավելի երկարատև այցի ընթացքում միաժամանակ իրականացնում է ինստիտուցիոնալ կարողությունների և ծրագրերի որակի գնահատում:

2019թ.-ին ՈԱԱԿ-ը պլանավորում է փորձարկել հավատարմագրման կազմակերպման նման ընթացակարգը որևէ բուհի համար, որը պատրաստ է միաժամանակ ներկայացնել ինստիտուցիոնալ կարողությունների և կրթական ծրագրերի ինքնավերլուծություններ:

Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհերի ծրագրեր

2018-ին հավատարմագրում ստացած բոլոր ուսումնական հաստատությունները, հետևելով Հավատարմագրման կարգի պահանջներին, ՈԱԱԿ են ներկայացրել փորձագիտական զեկույցներում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրերը և ժամանակացույցերը: ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի առաջարկությունների հիման վրա հավատարմագրման որոշումից հետո բուհերը վերանայել են իրենց ներկայացրած պլանները:

Հավատարմագրման կարգի համաձայն 4 կամ 6 տարի հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունները 2 տարին մեկ անգամ պարտավոր են իրականացնել ինստիտուցիոնալ ներքին գնահատում և արդյունքները ներկայացնել ՈԱԱԿ:

Հավատարմագրման դիմելու վերջնաժամկետը լրանալու կապակցությամբ ուսումնական հաստատությունները դիմել են ինստիտուցիոնալ հավատարմագրման և սահմանված ժամկետներում ներկայացնում են ինքնավերլուծությունները, որոնք ամփոփում են բարելավման պլանով նախատեսված գործողությունների արդյունքները:

Հավատարմագրման կարգի պահանջներին համապատասխան՝ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստանալու պահից յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ ուսումնական հաստատությունը ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման մասին:

Հավատարմագրումից հետո իրականացված գործողությունների վերաբերյալ երրորդ հաշվետվությունն է ներկայացրել ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան, որն ուսումնասիրվել է համակարգողի կողմից: Պայմանական հավատարմագրում ստացած ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում 2018թ. սկսվել է հավատարմագրման նոր գործընթաց:

Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ

2018թ. ՈԱԱԿ գործողությունների պլանի համաձայն՝ ՄՄԿՈՒ ոլորտի համար վերանայվել է ինստիտուցիոնալ կարողությունների էլեկտրոնային հարցաշարը, ՈԱԱԿ պաշտոնական կայքէջում հրապարակվել են տարածաշրջանային քոլեջների փորձնական փոխգնահատման արդյունքները, իրականացվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և EQARF պահանջների համեմատական վերլուծություն, հաստավել է ՄԿՈ ոլորտի հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման սակագինը:

Հաշվետու տարում «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսական համաձայնագրի թիվ 5 նախապայմանի շրջանակներում իրականացվել են փորձագիտական աշխատանքի վերաբերյալ եռափուլ վերապատրաստումներ: ԿԳՆ կողմից ընտրված գյուղատնտեսական քոլեջների տնօրենների հետ (Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ, Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ, Ստեփանավանի

պրոֆ. Ա. Քալանթարի անվ. պետական գյուղատնտեսական քոլեջ, Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ) տեղի են ունեցել հանդիպումներ, որոնց ընթացքում ներկայացվել է թիվ 5 նախապայմանի շրջանակներում գործողությունների իրականացման՝ՈԱԱԿ-ի կողմից մշակված ճանապարհային քարտեզը, քննարկվել են առկա խնդիրները, համաձայնություն է ձեռք բերվել հետագա համագործակցության ձևաչափի վերաբերյալ: Այնուհետև, ՈԱԱԿ աշխատակիցների կողմից իրականացվել է՝ համաձայնագրի շրջանակներում ընտրված 4 գյուղատնտեսական քոլեջների աշխատակիցների երկփուլ վերապատրաստում (5-ական մասնակից յուրաքանչյուր քոլեջից), որին հաջորդել է քոլեջների աշխատակիցներին պարբերական առցանց եղանակով աջակցության տրամադրումը (19.02-30.06.2018թ.): Ընտրված 4 քոլեջի հավատարմագրման գործընթացի կազմակերպման համար իրականացվել են ժամանակացույցով սահմանված բոլոր աշխատանքները, ընդհուպ՝ փորձագիտական խմբերի կողմից ինքնավերլուծությունների և կից փաստաթղթերի ուսումնասիրում և այցերի պլանների կազմում, որին չի հաջորդել որևէ գործողություն՝կապված թիվ 5 նախապայմանով սահմանված գործողությունների իրականացման ֆինանսական միջոցների բացակայության հետ. խնդրի լուծման համար ՈԱԱԿ-ը շարունակաբար պաշտոնական գրություններով դիմել է համապատասխան գերատեսչություններ:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը հանդիպումներ է ունեցել ՄԿՈՒ ոլորտի շահակիցների հետ, մասնավորապես՝ ապրիլ ամսին «ՄՄՈՒՀ-երում որակի ներքին ապահովման համակարգի ներդրում. խնդիրներ և հնարավորություններ» թեմայով տեղի է ունեցել ոլորտի ներկայացուցիչների հետ մեծ համաժողով: Ոլորտի ներկայացուցիչներն ակտիվ մասնակցություն են ունեցել նաև ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված այլ համաժողովներին, կլոր-սեղան քննարկումներին, որոնց արդյունքում դուրս են բերվել ոլորտի ներկայացուցիչներին հուզող հիմնական խնդիրները: ՄԿՈՒ ոլորտի շահակիցների հետ պարբերական հանդիպումների ընթացքում վերջիններիս տրամադրվել է համապատասխան օժանդակություն և խորհրդատվություն:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ Հիմնադրամի աշխատանքների շնորհիվ 12 տարածաշրջանային և 60-ից ավել այլ քոլեջներում գործում են որակի ապահովման պատասխանատուներ կամ կենտրոններ: Բացի ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի շրջանակում հավատարմագրման գործընթացում գտնվող գյուղատնտեսական ոլորտի 4 քոլեջներից, հավատարմագրման նպատակով արտաքին գնահատման են պատրաստվում ևս 7 ՄՄՈՒՀ:

Մշտադիտարկումների իրականացում

Ոչ ֆինանսական գործունեության ծրագրի շրջանակներում 2018թ. ընթացքում ՈԱԱԿ-ը մշտադիտարկումներ է իրականացրել ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած ուսումնական հաստատություններում՝ հետևելու փորձագիտական զեկույցում մատնանշված թերությունների վերացման աշխատանքների ընթացքին, և հավատարմագրում չանցած ուսումնական հաստատություններում՝ պարզելու որակի ներքին ապահովման համակարգերի գործունեության արդյունքները:

Մշտադիտարկումների նպատակն էր հավաստիանալ, որ հավատարմագրում ստացած բուհերը կատարում են ստանձնած պարտավորությունները կրթության որակի շարունակական բարելավման ապահովման առումով, իսկ չհավատարմագրվածներն սկսել են որակի ներքին ապահովման համակարգի ներդրումը:

Մշտադիտարկման նպատակով այցեր են եղել 10 բուհեր, ուսումնասիրվել են բարելավման պլանի գործողությունների կատարումը, որակի ներքին ապահովման համակարգի ներդրվածության աստիճանը, գործող մեխանիզմները և չհավատարմագրված բուհերի նախապատրաստվածության աստիճանը ինստիտուցիոնալ հավատարմագրմանը: Այցերի արդյունքների մասին տեղեկացվել են բուհերի ռեկտորները, բացի այդ, դրանց հիման վրա պատրաստվել են մշտադիտարկման հաշվետվություններ:

Մշտադիտարկումները ցույց են տալիս, որ բուհերը հետևում են փորձագետների խորհրդատվությունների հիման վրա կառուցված բարելավման պլանների իրականացմանը:

Նպատակ 1.2. ՄՈՒՀ-երին տրամադրվում են խորհրդատվական ծառայություններ:

Այս նպատակին ուղղված՝ հաշվետու տարում նախատեսված էր՝

- Հիմնադրամի նախաձեռնությամբ որակի ապահովման մեթոդաբանության վերաբերյալ պարբերական խորհրդատվությունների տրամադրում,
- ՄՈՒՀ-երի նախաձեռնությամբ ՈԱ խնդիրների հաղթահարմանն ուղղված թիրախային խորհրդատվությունների տրամադրում:

Հաշվետու տարում ՄՈՒՀ-երի աշխատակիների համար կազմակերպվել են ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը և կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված վերապատրաստման 5 դասընթացներ, որոնց ընթացքում վերապատրաստվել է 96 մասնագետ, ընդ որում, բուհերից 53, քոլեջներից 43 մարդ: Ռազմական բարձրագույն ուսումնական հաստատությունների 42 աշխատակիցների համար կազմակերպվել է 7 աշխատաժողով /3-ը Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի 22 աշխատակիցների համար/, 4-ը՝ Խամփերյանցի անվ. ռազմական ավիացիոն համալսարանի 20 աշխատակիցների համար/: ԵՄ ծրագրով նախատեսված վերապատրաստում է անցկացվել 4 գյուղատնտեսական քոլեջների համար:

Դասընթացներից հետո անցկացված արդյունավետության գնահատումը ցույց է տվել, որ ՄՈՒՀ-երի աշխատակիցների ավելի քան 80% բավարարված է ՈԱԱԿ-ում անցկացվող վերապատրաստումներից: Հարկ է նշել, որ մասնակիցների արձագանքների հիման վրա վերապատրաստման նյութն անընդհատ բարելավվել է, լրացվել է գործնական պարապմունքների պակասը, վերանայվել են դասավանդման մեթոդները:

Կրթության որակի ապահովման վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը ՄՈՒՀ-երի աշխատակիցներին մշտական բնույթ է կրում: Շահակիցները դիմում են հիմնականում հետևյալ հարցերով. ինքնավերլուծության իրականացում, չափորոշիչների մեկնաբանում, ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերի փորձագիտական զեկույցում նշված

թերությունների վերացման ծրագրի կազմում, երկրորդ ցիկլի ինստիտուցիոնալ հավատարմագրման առանձնահատկությունները:

Հաշվետու շրջանում շահակիցների հետ անցկացվել են մի շարք կլոր սեղաններ, որոնց ընթացքում քննարկվել են «ՄԿԾ որակի ապահովման մեխանիզմներ. դասախոսի տեսանկյուն», «Ուսանողի գնահատում», «Հետազոտություն և կրթություն» թեմաները: Կլոր սեղաններին ընդհանուր առմամբ մասնակցել են տարբեր բուհերի մոտ 300 աշխատակիցներ: Կլոր սեղանների նպատակն է եղել որակի ապահովման մեխանիզմներով գնահատել մասնագիտությունների կրթական ծրագրերի հնարավոր ռիսկերը, բարձրացնել խնդրահարույց հարցերը, քննարկել դրանց լուծման ուղիները:

2018թ. խորհրդատվություն է ապահովվել Արցախի Հանրապետության բուհերի համար, որոնցում որակի ապահովման մեխանիզմների ձևավորումը նոր է սկզբնավորվել: Կազմակերպվել են փոխադարձ այցեր, անցկացվել են տեղեկատվության բարձրացման սեմինարներ: Երկօրյա աշխատաժողով է անցկացվել Արցախի պետական համալսարանում, որին մասնակցել են նաև Նարեկացու անվան և Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանների աշխատակիցները: Այց է կազմակերպվել նաև Նարեկացու անվան համալսարան, որտեղ տեղի է ունեցել տեղեկատվական հանդիպում:

ՈԱԱԿ-ը, խթանելով որակի համակարգի ներքևից վերև ձևավորման քաղաքականությունը, ընդլայնում է շահակիցների երկխոսությունը դասավանդման-ուսումնառության համակարգային խնդիրների վերաբերյալ:

Հաշվետու տարում ՄՈՒՀ-երի աշխատակիցների համար կազմակերպվել են ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը և կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ, որոնց ընթացքում վերապատրաստվել է շուրջ 100 հոգի:

Ռազմական ուսումնական հաստատությունների 42 աշխատակիցների համար կազմակերպվել է 7 աշխատաժողով:

ԵՄ ծրագրով նախատեսված վերապատրաստում է անցկացվել 4 գյուղատնտեսական քոլեջների համար:

Վերապատրաստումներից հետո անցկացված արդյունավետության գնահատումը ցույց է տվել, որ ՄՈՒՀ-երի աշխատակիցների ավելի քան 80% բավարարված է ՈԱԱԿ-ում անցկացվող վերապատրաստումներից:

Նպատակ 1.3. Հիմնադրամն իրականացնում է ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ վերհանելու մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման հիմնախնդիրները և լավագույն փորձը:

Այս նպատակին հասնելու համար հաշվետու տարում անհրաժեշտ էր՝

- պարբերաբար իրականացնել և հրապարակել թեմատիկ ուսումնասիրություններ,
- փորձաքննությունների հիման վրա հրապարակել ամփոփ տեղեկություններ և վերլուծություններ,
- կազմակերպել ՄՈՒՀ-երի միջև փորձի փոխանակում որակի ապահովման ոլորտում:

Հետևելով ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման համակարգի պրոտոկոլին՝ 2018թ.-ին հավատարմագրման գործընթացի շարունակական բարելավման նպատակով կատարվել է գործընթացների արդյունավետության վերլուծություն, որը թույլ է տալիս պարզել փաստացի վիճակը, ուժեղ կողմերը, խնդիրներն ու բացթողումները, վերանայել ու կատարելագործել (ըստ նպատակների ու խնդիրների) փաստաթղթային հենքն ու ողջ գործընթացը: Հավատարմագրումների արդյունավետության գնահատումն ու վերլուծությունն իրականացնելու նպատակով ըստ գործընթացի առանձին փուլերի (ինքնավերլուծություն, նախնական գնահատում, փորձագիտական այց, փորձագիտական զեկույցի կազմում) անցկացվել է անանուն հարցում հավատարմագրված բուհերի աշխատակիցների, տեղացի ու միջազգային փորձագետների շրջանում:

Հավատարմագրման գործընթացի արդյունավետության ուսումնասիրությունից զատ, իրականացվել են հարցումներ և այլ ուսումնասիրություններ՝ շահակիցների կարիքները, ոլորտի խնդիրները, լավագույն փորձը բացահայտելու նպատակով:

2018 թ. ՈԱԱԿ-ի ուշադրության կենտրոնում են եղել հատկապես 3 թեմաներ՝ ուսանողի գնահատում, հետազոտահեն կրթության կազմակերպում, բուհ-գործատու համագործակցության հաստատման մեխանիզմներն ու ուղիները: Այսպես, օրինակ՝ հետազոտահեն կրթության թեմայով ՈԱԱԿ-ի Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի վերլուծությունը ներկայացվել է ՈԱԱԿ-ում կազմակերպված կլոր-սեղանների և վերապատրաստումների ընթացքում: Ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին ցիկլի հավաքագրված փորձագիտական զեկույցներից դուրս են բերվել ոլորտի խնդիրները, ձեռքբերումներն ու մարտահրավերները:

ՄՈՒՀ-երի միջև որակի ապահովման ոլորտում փորձի փոխանակումն առավել արդյունավետ դարձնելու համար, արձագանքելով շահակիցների կարիքներին, շարունակվել է Որակի ապահովման աջակիցների ցանցի գործունեությունը: Ցանցի հիմնադրման աշխատանքները մեկնարկել են 2017թ: ՈԱԱԿ-ը Ֆեյսբուքում ստեղծել է «Որակի աջակիցներ» փակ խումբը, որը դարձել է քննարկումների հարթակ քոլեջներից ցանցի անդամների համար: 2018 թ. ցանցի անդամները մասնակցել են ՈԱԱԿ-ում կազմակերպված կլոր սեղաններին, իրենց օժանդակությունն են բերել փորձագետների ցանցի ձևավորման գործում, օգնել են վերհանել և տարածել ՄՈՒՀ-երի դրական փորձը:

Հաշվետու շրջանում շահակիցների հետ անցկացվել են մի շարք կլոր սեղաններ, որոնց ընթացքում քննարկվել են «ՄԿԾ որակի ապահովման մեխանիզմներ. դասախոսի տեսանկյուն», «Ուսանողի գնահատում», «Հետազոտություն և կրթություն» թեմաները: Կլոր սեղաններին ընդհանուր առմամբ մասնակցել են տարբեր բուհերի մոտ 300 աշխատակիցներ: Կլոր սեղանների նպատակն է եղել որակի ապահովման մեխանիզմներով գնահատել մասնագիտությունների կրթական ծրագրերի հնարավոր ռիսկերը, բարձրացնել խնդրահարույց հարցերը, քննարկել դրանց լուծման ուղիները:

ՈԱԱԿ-ի համար ավանդույթ է դարձել յուրաքանչյուր տարի համաժողով, որի ընթացքում քննարկվում են կրթության համակարգի ձեռքբերումները, վերհանվում հիմնախնդիրները, դուրս բերվում հաջորդ տարվա աշխատանքի գերակայությունները: 2018 թ. ապրիլին տեղի ունեցավ «Կրթություն և մասնագետ. մասնագիտական կրթությունն այսօր և վաղը» թեմայով որակի ապահովման ֆորումը, որին մասնակցեցին ավելի քան 200 մասնագետներ տարբեր

բուհերից և քոլեջներից: Այլ հարցերի հետ միասին քննարկվեց հավատարմագրման նոր շրջափուլում մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը՝ շեշտադրելով իրականացվող բոլոր կրթական ծրագրերի շրջանավարտների ռիսկերի կառավարումը:

Ֆորումի ավարտին անցկացված հարցումը ցույց տվեց, որ այն արդարացրել է մասնակիցների 83.7%-ի ակնկալիքները, 84.7%-ը նշել են, որ այն արդյունավետ է եղել, 80% մատնանշել է, որ այն նպաստել է նոր գիտելիքների ձևավորմանը: Որպես դրական արդյունք մասնակիցները նշել են, որ ֆորումը ուղղորդիչ էր ընթացիկ և հետագա անելիքների և ծրագրերի իրականացման համար, հնարավորություն ընձեռվեց ավելի լավ հասկանալ այսօրվա մասնագիտական կրթության խնդիրները, մարտահրավերները, լուծումներ գտնելու արդյունավետ ուղիները, նպաստեց փորձի փոխանակմանը: Ֆորումի մասնակիցների ավելի քան 80%-ը կիրառելի է համարել առաջարկված հետևյալ ձևաչափերը. որակի ապահովման համար գիտակցված բարեփոխումներ ներքևից վերև անցկացումը, ուսուցման որակի բարելավման ինստիտուցիոնալ մեխանիզմների կիրառումը, կրթական մակարդակների, ուսումնառության ակնկալվող արդյունքների և գնահատման չափանիշների փոխկապակցումը, բուհ-գործատու համագործակցության մոդելի ներդնումը:

2018թ. շարունակվել է բուհ-գործատու համագործակցության մոդելի փորձարկման արդյունքների ներկայացումը: Մասնավորապես, Որակի ֆորումի միջոցառումների շրջանակներում տարբեր շահակիցների (երիտասարդ դասախոսներ, ուսանողներ, գործատուներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ) խմբերի հետ քննարկվել են թարգմանչության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում փորձարկված մոդելի արդյունքները, շահակիցների հետ ընդհանուր քննարկումներ են իրականացվել: Ներկայացված մոդելը նպատակ ունի բարելավել ուսումնական հաստատությունների և գործատուների երկխոսությունը և նպաստել աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մասնագետների պատրաստմանը: ՈԱԱԿ-ը նաև պայմանավորվածություն է ձեռք բերել բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ այլ ոլորտներում (տնտեսագիտություն, ճարտարագիտություն, մանկավարժություն և այլն) մոդելի փորձարկումները շարունակելու նպատակով:

Հիմնադրամը շահակիցների կողմից ընկալվում է որպես անկախ և մասնագիտացված կառույց, որն առաջնորդում է որակի արտաքին ապահովման համակարգի զարգացումները և որակի մշակույթի տարածումը ՀՀ-ում միջազգային չափանիշներին համապատասխան:

Հավատարմագրման նոր շրջափուլում մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության առաջնահերթ կարևորման նպատակով բուհերի որակի ներքին համակարգերի համար որպես խնդիր է շեշտադրվել իրականացվող բոլոր կրթական ծրագրերի շրջանավարտների ռիսկերի կառավարումը:

2. ՈԱԱԿ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՃԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամի ռազմավարական գերակայություններից է ՈԱԱԿ-ի, որպես որակի արտաքին ապահովման կառույցի, զարգացումը: ՈԱԱԿ-ն անում է ամեն ինչ՝ ունենալու իր առաքելությանը համապատասխան անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսներ, կազմակերպելու շահակիցների կողմից ընդունելի, օբյեկտիվ և անկախ գնահատումներ: Հիմնադրամի որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքը նպատակաուղղված է շահակիցների հանդեպ և միջազգային ասպարեզում ՈԱԱԿ-ի գործունեության հաշվետվողականությանը և արդյունավետության ցուցադրմանը, կենտրոնի կողմից իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքների թափանցիկության ապահովմանը:

2018թ.-ին գրանցվել են հետևյալ ձեռքբերումները՝ միտված ՈԱԱԿ-ի նկատմամբ վստահության աճին:

Նպատակ 2.1. Հիմնադրամի կողմից կազմակերպված գնահատումները հանրության կողմից ճանաչվում են որպես որակն օբյեկտիվորեն արտացոլող ցուցիչներ:

Այս նպատակին հասնելու համար հաշվետու տարում անհրաժեշտ էր՝

- շահակիցներին ապահովել տեղեկատվությամբ գնահատումների արդյունքների վերաբերյալ,
- ապահովել հանրության կողմնորոշումը՝ Հիմնադրամի գնահատումների հիման վրա:

ՈԱԱԿ-ի գործունեության և մասնագիտական կրթության համակարգի նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանը նպաստելու տեսանկյունից հիմնադրամն առանձնակի կարևորում է իր գործունեության թափանցիկությունը կրթական հանրության և հաշվետվողականությունը բոլոր շահակիցների առջև: Պարբերաբար կազմակերպվող հանդիպումները, պլանավորվող գործողությունների և մշակվող փաստաթղթերի լայն քննարկումները ոլորտի շահակիցների հետ, գործող չափանիշների, ձևաչափերի, ընթացակարգերի և այլ փաստաթղթերի հասանելիության ապահովումը, տարատեսակ խորհրդատվությունների, վերլուծությունների և հաշվետվությունների հրապարակումը կոչված են այդ նպատակին:

2018 թվականի ընթացքում կանոնավոր կերպով կայքում տեղադրվել են Հիմնադրամի գործունեությանն ու հավատարմագրմանն առնչվող փաստաթղթերը, ՈԱԱԿ-ի մշակումները, բացի այդ ՈԱԱԿ կայքում կատարվել է 65 տեղեկատվական բնույթի հրապարակում: ՈԱԱԿ-ի ներկայացուցիչները մասնակցել են 14 հեռուստառադիոհաղորդումների և հարցազրույցների: Տարվա ընթացքում արձանագրվել է նաև շուրջ 300 հրապարակում ՈԱԱԿ-ի մասին մամուլի հաղորդագրությունների արտատպման կամ կազմակերպվող միջոցառումների լուսաբանման միջոցով: Լրատվամիջոցներին և հանրությանը հետաքրքրող հիմնական թեմաներն են եղել ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքները, կրթական ծրագրերի բարեփոխումները, մրցունակ մասնագետների պատրաստման խնդիրները, գործատուների հետ համագործակցության խթանումը, ինչպես նաև ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող միջազգային հավատարմագրումները:

Հավատարմագրման գործընթացի արդյունքների վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվություն է տրամադրում «Հավատարմագրման պետական գրանցամատյանը».

ներկայումս հրապարակված են 27 ուսումնական հաստատությունների վերաբերյալ փաստաթղթերը:

«Google analytics» ծառայության կողմից հասանելի տվյալների համաձայն ՈԱԱԿ կայքը հաշվետու տարում ունեցել է 57518 էջադիտում: Պահանջված էջերն են «Հավատարմագրում» և «Ինստիտուցիոնալ հավատարմագրման պետական գրանցամատյան» բաժինները թե՛ հայերեն, թե՛ անգլերեն տարբերակներում: Պահանջարկ ունեցող էջերից են նաև «Նորություններ» և «Փորձագետներ» բաժինները: Այցելուների մեծ մասի տարիքը տատանվում է 18-34-ի միջև:

Facebook սոցիալական ցանցում տարվա ընթացքում ՈԱԱԿ-ի հետևորդների թիվն ավելացել է 347-ով՝ հասնելով 3011-ի 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Facebook ցանցում էջի հետևորդների շրջանում մեծ պահանջարկ ունեն տեսանյութերը, ինչպես նաև ՈԱԱԿ-ում տեղի ունեցող իրադարձությունների /համաժողովներ, քննարկումներ, Հավատարմագրման հանձնաժողովի նիստեր/ արդյունքները ներկայացնող նյութերը:

Տարվա ընթացքում գործել է նաև ՈԱԱԿ-ի Youtube-յան ալիքը, որտեղ հրապարակվել են ապրիլին տեղի ունեցած Որակի ֆորումի տեսանյութերը, ինչպես նաև կրթության որակին առնչվող հեռուստաանդրադարձները: Կանոնավոր կերպով գործել են ՈԱԱԿ-ի էջերը Twitter սոցիալական ցանցում, Flikcr նկարների պահոց-հարթակում, «Google bussiness» հարթակում:

ԶԼՄ-ների հետ աշխատանքներում պետք է արձանագրել մի քանի ձեռքբերում: Հաշվետու տարում ՈԱԱԿ-ն ակտիվորեն համագործակցել է կրթամշակութային ուղղվածություն ունեցող «Շողակաթ» հեռուստաընկերության հետ: Տարվա ընթացքում կրթության որակի ապահովմանը նվիրված երեք լայնածավալ անդրադարձ են կատարել «Տարբերակ» և «Թեմա» հեղինակային հաղորդաշարերը, մանրակրկիտ քննարկվել են բարձրագույն կրթության բարեփոխումները, բարձրագույն կրթության որակի ապահովման և հավատարմագրման խնդիրները:

ՈԱԱԿ-ն Արցախում սփռվող լրատվամիջոցների միջոցով հասանելի է դարձել նաև Արցախի Հանրապետությունում բնակվող մեր հայրենակիցներին: Տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը կրթության որակի ապահովմանը նվիրված տեղեկատվական այց է իրականացրել Արցախ, որը լուսաբանվել է այնտեղ գործող ԶԼՄ-ների կողմից, իսկ ՈԱԱԿ տնօրենը հյուրընկալվել է Արցախի Հանրային հեռուստաընկերությանը: Արցախի Հանրային հեռուստաընկերությունը տարվա ընթացքում նաև պարբերաբար անդրադարձել է բուհերում ծավալվող որակի ապահովման գործընթացներին:

Շարունակվել է ավանդական դարձած համագործակցությունը Հանրային ռադիոյի և Հանրային հեռուստաընկերության, «Շանթ» հեռուստաընկերության, «Արմենպրես» լրատվական գործակալության հետ: Եղել են լուսաբանումներ նաև «Ար», «Երկիր մեդիա», «Հ2» հեռուստաընկերությունների, «Լրատվական ռադիոյի», «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի կողմից:

ՀՀ ՊՆ ռազմական համալսարանների հավատարմագրմամբ պայմանավորված՝ ոլորտը լուսաբանող «Զինուժ» հեռուստածրագիրը և «Հայզինվոր» պարբերաթերթը ևս անդրադարձել են կրթության որակի ապահովման խնդիրներին: Ընդ որում, «Հայզինվոր» պարբերաթերթի հրապարակումներից մեկը ծավալուն հարցազրույց էր ՈԱԱԿ-ի տնօրեն Ռուբեն Թոփչյանի հետ՝

նվիրված հավատարմագրման նպատակներին և արդյունքներին, իսկ երկրորդը փորձագետի տեսանկյունից վերլուծություն էր, թե ինչ է տվել հավատարմագրումը ռազմական բուհերին:

Ոչ չափելի, բայց միևնույն է, ձեռքբերում է այն, որ հանրությունը սկսել է կարևորել հավատարմագրումը: Այդ մասին են վկայում ստացվող բազմաթիվ հաղորդագրությունները սոցիալական ցանցերում և էլ. փոստին, ինչպես նաև զանգերն ու այցելությունները, երբ ուսանողները փորձում են հասկանալ՝ հավատարմագրված է արդյոք իրենց ուսումնական հաստատությունը: Ընդ որում, եթե նախորդ տարիներին միայն արտասահմանցի ուսանողներն էին հետաքրքրվում իրենց բուհի հավատարմագրված լինելու հանգամանքով, ապա այժմ նաև հայաստանցի ուսանողներին է հարցը հետաքրքրում:

ՁԼՄ-ներում ևս տարբեր բուհերի ձեռքբերումներին ու ձախողումներին անդրադառնալիս շեշտադրվում է հավատարմագրում ունենալու կամ չունենալու հանգամանքը, անգամ շեշտադրվում են փորձագիտական զեկույցում բացասական գնահատականի արժանացած ոլորտները /չափանիշները/:

«Google analytics» ծառայության կողմից հասանելի տվյալների համաձայն ՈԱԱԿ-ի կայքը հաշվետու տարում ունեցել է 57518 էջադիտում: Պահանջված էջերն են «Հավատարմագրում» և «Ինստիտուցիոնալ հավատարմագրման պետական գրանցամատյան» բաժինները թե հայերեն, թե անգլերեն տարբերակներում: Պահանջարկ ունեցող էջերից են նաև «Նորություններ» և «Փորձագետներ» բաժինները: Այցելուների մեծ մասի տարիքը տատանվում է 18-34-ի միջև:

Բոլոր հավատարմագրումների փորձագիտական զեկույցները, ՈԱԱԿ-ի եզրակացությունները և Հավատարմագրման հանձնաժողովի որոշումները հրապարակված են ՈԱԱԿ-ի կայքէջում՝ «Հավատարմագրում» բաժնում:

Նպատակ 2.2. ՄՈՒՀ-երը բավարարված են գնահատման արդյունքներով՝ անկախ դրանց դրական կամ բացասական լինելուց:

Այս նպատակին հասնելու համար հաշվետու տարում անհրաժեշտ էր ապահովել՝

- վստահելի և ՄՈՒՀ-երի համար ընդունելի փորձագետների հասանելիություն,
- գնահատման արդյունքների բողոքարկման վստահելի մեխանիզմների առկայություն:

ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գնահատումների նկատմամբ ուսումնական հաստատությունների վստահությունը էապես կախված է փորձագիտական խմբի անդամների մասնագիտական արհեստավարժությունից:

Բարձրագույն և ՄԿՈՒ ոլորտների ՈԱԱԿ-ի փորձագետների առցանց էլեկտրոնային բազան, ունենալով փորձագետների վերաբերյալ տեղեկատվությունը թարմացնելու հնարավորություններ, թույլ է տալիս նախապատրաստվել նաև ծրագրային հավատարմագրմանը՝ տեղեկատվություն պարունակելով փորձագետների նեղ մասնագիտական ուղղվածության, կրթական ծրագրերի մշակման կամ գնահատման փորձառության մասին:

Փորձագետների բազաների ընդլայնման համար պարբերաբար հանդիպումներ են տեղի ունեցել հանրապետության և արտերկրի մի շարք բուհերի, ինչպես նաև մասնագիտական միությունների ներկայացուցիչների հետ, որոնք հետագայում համալրել են ՈԱԱԿ-ի տեղացի և միջազգային փորձագետների բազաները: Միջազգային փորձագետների քանակն ընդլայնելու նպատակով հաշվետու տարում նամակներ են ուղարկվել միջազգային տարբեր հավատարմագրման կառույցների և գործակալությունների՝ փորձագետներ առաջարկելու և/կամ տեղեկատվությունը իրենց փորձագետների շրջանում տարածելու հորդորով: ՈԱԱԿ-ի աշխատակիցները պարբերաբար ուղղորդել և աջակցել են հետաքրքրված անձանց գրանցվել փորձագիտական բազայում: Կատարված աշխատանքների արդյունքում փորձագիտական բազան համալրվել է 380 միջազգային փորձագետով: Ներկայումս ՈԱԱԿ-ի փորձագիտական բազաներում, ընդհանուր առմամբ, ընդգրկված է շուրջ 600 փորձագետ:

Ուսանող փորձագետների նախապատրաստման աշխատանքները կազմակերպվում են ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» ցանցի միջոցով, որը համագործակցում է Ուսանողների ազգային ասոցիացիայի, բուհական կառույցների և առանձին ուսանողների հետ: «Ուսանողության ձայնը» ակտիվացրել է աշխատանքները նաև քոլեջների հետ՝ նրանց ներկայացուցիչներին ներգրավելով ցանցում. 2018թ. ընթացքում «Ուսանողության ձայն» նախագծի կողմից վերապատրաստված 29 ուսանող-փորձագետներից 20-ը քոլեջների ուսանողներ են եղել:

Հավատարմագրման ընթացքում հիմնավորված, անկախ և անկողմնակալ փորձագիտական գնահատում ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ում կազմակերպվել է վերապատրաստում փորձագետների համար: Վերապատրաստումներին մասնակցել է ՈԱԱԿ-ի փորձագիտական բազայում գրանցված 45 մասնագետ: Նրանցից 18-ը բուհերից են, 3-ը՝ Կրթության ազգային ինստիտուտից, մնացած 26-ը քոլեջների աշխատակիցներ են:

2018 թ. փորձագետների հավաքագրման համար մշակվել և կիրառվել է նոր ծրագիր, որի համաձայն ՈԱԱԿ-ում կազմակերպվել են թեմատիկ հանդիպումներ բուհերի աշխատակիցների հետ, կլոր սեղաններ, որոնց արդյունքում աչքի ընկած մասնագետներին առաջարկվում էր գրանցվել փորձագետների բազայում և մասնակցել վերապատրաստումների:

Միջազգային փորձագետների խորհրդատվության վրա հիմնված ՈԱԱԿ-ի գործունեության բարելավման պլանով նախատեսված է Հավատարմագրման հանձնաժողովի որոշումների բողոքարկման մեխանիզմների փոփոխություն: Հավատարմագրման ներկա փուլում փոխվել է բողոքարկման վերաբերյալ մոտեցումը, և ՈԱԱԿ-ը հաշվետու տարում ձեռնամուխ է եղել բողոքարկման նոր ընթացակարգի մշակմանը: Այս նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ՝ ուսումնասիրելու միջազգային փորձը, վերլուծելու ՀՀ օրենսդրական դաշտի սահմանափակումները, քննարկումներ իրականացնելու համապատասխան շահակիցների հետ: Մշակվել է բողոքարկման նոր ընթացակարգի նախագիծը, շրջանառվել ՈԱԱԿ-ի անձնակազմի շրջանակներում: Նախագծի վերջնականացումից հետո այն կքննարկվի շահակիցների հետ և կհաստատվի 2019թ.-ին:

ՈԱԱԿ-ը վերամշակել է տեղեկատվության էլեկտրոնային բազան, որտեղ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները պարբերաբար ներկայացնում են իրենց գործունեության արտաքին գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվություն: Արդյունքում ձևավորվել է հաստատությունների ավելի պատասխանատու վերաբերմունք տվյալների և կառավարման փաստաթղթերի նկատմամբ:

Ընդլայնվել են բուհերի և ՄԿՈՒ հաստատությունների արտաքին գնահատում իրականացնող փորձագետների հաշվառման առցանց բազաները: Ներկայումս փորձագետների բազաներում ընդգրկված են 600-ից ավել տեղացի և միջազգային մասնագետ: Փորձագետների ընտրության համար կիրառվում են խմբային վերապատրաստումներ և փորձագետին անհրաժեշտ կարողություններ ձևավորող դերային խաղերի մեթոդաբանությունը ուսանող փորձագետների ներգրավմամբ:

Նպատակ 2.3. Հիմնադրամն ապահովում է իր գործունեության անկախությունը:

Այս նպատակին ուղղված հաշվետու տարում անհրաժեշտ էր ապահովել՝

- գնահատումների անաչառությունը,
- Հիմնադրամի ֆինանսական անկախությունը:

Հավատարմագրման նպատակով իրականացվող փորձագիտական գնահատումների անաչառությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ը կիրառում է մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք վստահելի են շահակիցների և միջազգային փորձագետների համար: Տեղացի և միջազգային փորձագետների կարծիքով, ինչպես նաև ՈԱԱԿ-ի գործունեության արտաքին փորձաքննություն իրականացրած խմբի պնդմամբ՝ գնահատման մեխանիզմները հստակ ձևակերպված են, իսկ գործընթացներն իրականացվում են գործող ընթացակարգերին համապատասխան: Գնահատումների սուբյեկտիվությունից խուսափելու համար գործընթացների բոլոր մասնակիցներն առաջնորդվում են ՈԱԱԿ-ի էթիկայի և բարեվարքության կանոններով, որոնք կարգավորում են նրանց անաչառությանն առնչվող վարքագիծը:

Փորձագիական գնահատումների անաչառության մասին է վկայում նաև այն փաստը, որ այդ գնահատումների վրա հիմնված հավատարմագրման հանձնաժողովի որևէ որոշում չի բողոքարկվել:

ՈԱԱԿ-ը միշտ կարևորել է փորձագետների պատշաճ վարձատրությունը՝ երաշխավորելու գնահատումների անկախությունը և ապահովելու նրանց մոտիվացիան: Բուհերի փորձաքննության կազմակերպման համար նախորդ տարիներին մշակվել էին հիմնավոր սակագներ և հստակ հաշվարկի մոտեցումներ: 2018թ.-ին իրականացվել է սակագների հաշվարկ քոլեջների համար՝ հաշվի առնելով ՄԿՈՒ ոլորտի հաստատությունների ցածր վճարունակությունը: ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել են ՄԿՈՒ հաստատությունների համար առավել ընդունելի սակագներ՝ փոքրաթիվ փորձագիտական խմբերի և կարճատև փորձագիտական այցի հնարավորությամբ:

Բուհերի ներկայացուցիչների 100 տոկոսը, համաձայն հարցման արդյունքների, վստահ է, որ փորձագիտական զեկույցն արտացոլում է հաստատությունների իրական վիճակը:

Փորձագետների շահամիտվածությունն արտահայտվել է գործընթացներում կրկին ընդգրկվելու ցանկությամբ՝ պայմանավորված թե վարձատրության, թե ՈԱԱԿ հետ համագործակցելու ցանկության հանգամանքներով:

Իր ֆինանսական քաղաքականությանը համահունչ՝ ՈԱԱԿ-ը ձգտում է հասնել եկամտի դիվերսիֆիկացիայի ավելի բարձր մակարդակի: ՈԱԱԿ-ն ամեն տարի հաշվարկում և ներկայացնում է պահպանման ծախսերը՝ ստանալու պետական ֆինանսավորում: Հավատարմագրումների կազմակերպման վճարները, Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված սակագների հիման վրա, հաշվարկվում է ՈԱԱԿ-ի կողմից՝ կախված արտաքին գնահատման բնույթից և տևողությունից, ներգրավված փորձագետների թվից և այլ պայմաններից: Ֆինանսական միջոցների հայթայթման այլ մեխանիզմներն են մասնակցությունը միջազգային ծրագրերին, դասավանդողների և ՄՈՒՀ-երի որակի ապահովման պատասխանատուների վերապատրաստումները, մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատակազմի վերապատրաստումները, վճարովի հիմունքով ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող համաժողովները և այլն:

ՈԱԱԿ-ում քննարկվում են աշխատանքների կազմակերպման և ծանրաբեռնվածության օպտիմալացման հնարավորությունը, երբ կառույցի կառավարումը կարող է իրականացվել ըստ գործող ծրագրերի, իսկ ֆինանսավորումն՝ ըստ վերջնարդյունքների:

Ստորև ներկայացվում է եկամտի աղբյուրների բազմազանեցման առաջընթացը.

Եկամտի աղբյուր	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
	Մասնաբաժին /%/									
Պետական ֆինանսավորում	97.8	95.9	93.50	88.5	84.7	68.1	48.5	56.6	52.20	59.8
Հավատարմագրումներ	2.2	0.7	1.00	6.5	5.4	1.4	35.5	15.2	19.50	27.8
Վերապատրաստումներ	0	3.4	3.80	-	0	2.1	0.6	2.5	1.95	1.6
Միջազգային համագործակցություն	0	0	1.70	2.4	9.8	28.4	15.4	25.7	24.40	6.8
Այլ	0	0	-	2.6	0.2	0	0	0	1.95	4.0



Պետական բյուջեից ստացվող եկամուտների կշռի նվազման միտումը և եկամուտների դիվերսիֆիկացիայի մակարդակը վկայում են ՈԱԱԿ-ի ֆինանսական անկախության մեծացման մասին:

Նպատակ 2.4. Հիմնադրամն արդյունավետ գործունեություն իրականացնող կայուն կազմակերպություն է:

Այս նպատակին ուղղված հաշվետու տարում անհրաժեշտ էր ապահովել՝

- կառավարման համակարգի արդյունավետությունը,
- Հիմնադրամն անհրաժեշտ ռեսուրսներով,
- ՈԱ վստահելի ներքին համակարգի առկայությունը:

Մարդկային ռեսուրսների կառավարում

Հոգաբարձուների խորհրդի հաստատված կազմակերպական կառուցվածքի համաձայն՝ ՈԱԱԿ-ն ունի 3 բաժին (Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության, Քաղաքականության մշակման ու իրականացման, ՈԱԱԿ քարտուղարություն) և վարչական ու օժանդակ կազմ:

ՈԱԱԿ անձնակազմ	Հաստիքներ
1. Տնօրեն	1
2. Գլխավոր մասնագետ/բաժնի ղեկավար	3
3. Ավագ մասնագետ	4
4. Մասնագետ	5
5. Վարչական կազմ	6.5
6. Օժանդակ կազմ	2.5
Ընդամենը	22

Տարվա ընթացքում Հիմնադրամը համալրվել է 1 նոր աշխատակցով: Եղել են կադրային տեղափոխություններ՝ նոր պաշտոնի նշանակմամբ և կարգի բարձրացմամբ:

Մրցունակ արհեստավարժ անձնակազմի հավաքագրումը ՈԱԱԿ-ի համար դեռևս մնում է որպես մարտահրավեր: Այդ իսկ պատճառով իր առաքելությունն ու նպատակներն պատշաճ կերպով իրականացնելու համար՝ հաշվետու տարում ՈԱԱԿ-ը նախաձեռնել է անձնակազմի պլանավորում: Հաշվարկվել է անձնակազմի, փորձագետների, համակարգողների և ուսանողների անհրաժեշտ քանակը 2 տարվա համար: Որպես լրացնող մեխանիզմ դիտարկվել է արտաքին մասնագետների ներգրավումը. համապատասխան վերապարտրաստումներից հետո որպես համակարգողներ կարող են ներգրավվել փորձագիտական խմբի անդամները: Անձնակազմի միջնաժամկետ պլանավորմանը զուգահեռ մշակվել է վերապատրաստումների իրականացման պլանը:

Հիմնադրամի աշխատակիցների շարունակական վերապատրաստման, կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով 2018թ. նրանց հնարավորություն է տրվել մասնակցել մի շարք վերապատրաստումների Հայաստանում և արտասահմանում (այդ թվում՝ Ֆրանսիա, Վրաստան, Ղազախստան, Ռուսաստան և այլն): Վերապատրաստման թեմաները եղել են տարբեր՝ կրթական ծրագրերի համահնչությունը ՈԱԾ-ին, դրանց գնահատումը, բուհ-գործատու համագործակցության խթանում և զարգացում, ասպիրանտական կրթության որակի ապահովում և այլն:

Բացի այդ, ՈԱԱԿ-ը շարունակում է բազմագործոնային աշխատող ունենալու քաղաքականությունը, երբ աշխատակիցը, բացի իրեն հանձնարարվարված հիմնական ուղղությունից, կատարում է այնպիսի աշխատանք, որն առնչվում է Հիմնադրամի կողմից իրականացվող մեկ այլ գործունեության: Մասնագիտացման ոլորտները սահմանված են որակի ապահովման չափանիշների և չափորոշիչների համաձայն. յուրաքանչյուր աշխատող պատասխանատու է մեկ ուղղության համար, օրինակ՝ կրթական ծրագրեր (ուսանողակենտրոն ուսումնառություն, ուսանողների գնահատում, դասավանդման և ուսումնառության փորձեր, ուղղահայաց և հորիզոնական համապատասխանություն և այլն), կառավարում և վարչարարություն, պրոֆեսորադասախոսական կազմ, հետազոտություն և միջազգայնացում, որակի ներքին ապահովում և այլն: 2018թ. հավատարմագրումների երկրորդ շրջափուլի հետ կապված խնդիր է դրվել աշխատակիցներին ուղղորդել մասնագիտական ոլորտների (բժշկական, մանկավարժական, տնտեսագիտական և այլ) միջազգային չափանիշների և առարկայական ուղենիշների ուսումնասիրության՝ ոլորտային չափանիշների մշակման նպատակով:

Ընթացիկ տարում պարբերաբար հարցումներ են իրականացվել՝ պարզելու աշխատանքային միջավայրից աշխատակազմի բավարարվածության աստիճանը: Մինչ այժմ անցկացված հարցումների արդյունքները ցույց են տվել, որ աշխատողները հիմնականում բավարարված են աշխատանքային միջավայրով և կարծում են, որ այն արդյունավետ ու համագործակցային բնույթ է կրում: Հարցման մեջ առանձնացվում են հետևյալ գործոնները.

		2018

	Աշխատակազմի անդամների անձնական ձեռքբերում	100%
	Աշխատանքային ծանրաբեռնվածությունը ողջամիտ սահմաններում է	100%
	Ես բավականաչափ գնահատվում եմ իմ ղեկավարի կողմից	71.4%
	Ընդհանուր բավարարվածությունը ստացած վերապատրաստումից	100%
	Ես վստահում եմ տնօրենին	85.7%
	Ես ունեմ գիտելիք և փորձ իմ պարտականությունները կատարելու համար	100%
	Ես ունեմ անհրաժեշտ ռեսուրսները իմ աշխատանքը իրականացնելու համար	85.7%
	Այն մարդիկ, ում հետ աշխատում եմ, համագործակցում են աշխատանքը կատարելու համար	89%
	Ընդհանուր բավարարվածությունն աշխատանքից	100%

Վերջին 3 տարիների զարգացման միտումները ցույց են տալիս, որ առկա է բարելավում կառավարման ոլորտում:

Տարբեր քննարկումների, հանդիպումների ժամանակ ցուցաբերած ակտիվության շնորհիվ, ՈԱԱԿ-ի աշխատակիցների մասնագիտական բարձր կարողությունների մասին շեշտում են նաև միջազգային փորձագետներն ու գործընկերները: Նրանց կարծիքով, աշխատակազմի կարողություններն, առկա մարդկային և նյութական ռեսուրսները բավարար են Հիմնադրամի ռազմավարական նպատակներն արդյունավետորեն իրականացնելու համար:

Հիմնադրամն ապահովված է ժամանակակից սարքավորումներով և համապատասխան հարմարություններով իր առօրյա աշխատանքային գործունեությունն արդյունավետ ծավալելու համար: ՈԱԱԿ-ի ջանքերով և եվրոպական աջակցման ծրագրերի միջոցով սարքավորումներն արդիականացվել են, իսկ կառավարման գործընթացում ներդրվել են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ: Հաշվետու տարում կառույցը ձեռք է բերել Office 365 էլեկտրոնային կառավարման և փաստաթղթաշրջանառության համակարգը:

Նյութական ռեսուրսների բավարարությունը և կառավարման արդյունավետությունը գնահատելու համար յուրաքանչյուր տարի իրականացվում են հարցումներ ՈԱԱԿ-ի աշխատակազմի շրջանում, և յուրաքանչյուր հավատարմագրման գործընթացից հետո՝ փորձագետների և ՄՈՒՀ-երի շրջանում:

Ըստ հարցումների արդյունքների վերլուծության՝ ՈԱԱԿ-ի աշխատակիցներն ընդհանուր առմամբ բավարարված են սարքավորումներով և աշխատանքային պայմաններով (2018թ.՝ 100%): Նրանք կարծում են, որ ՈԱԱԿ-ն ունի տեխնիկական և ֆիզիկական անհրաժեշտ հնարավորություններ՝ որակի արտաքին գնահատման գործընթացներն ու այլ գործողությունները կազմակերպելու և դրանք արդյունավետ կերպով իրականացնելու համար:

Ինչ վերաբերում է համակարգչային կարողություններին՝ աշխատողների 100%-ը բավարարված է առկա ծրագրերից և համակարգիչների արագությունից: ՈԱԱԿ-ի ներքին գործընթացների ավտոմատացված համակարգի՝ Office 365-ի արդյունավետ գործարկման վերաբերյալ հարցում դեռևս չի իրականացվել՝ համակարգի նոր ներդրվելու պատճառով: Տեղեկատվության որոնմանն ու օգտագործմանն, ինչպես նաև բոլոր ծրագրերի անվտանգության ապահովմանն առնչվող քաղաքականություններն ու ընթացակարգերը սահմանված են ՏՏ-ին և ռեսուրսներին վերաբերող պրոտոկոլներում:

ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների պարբերական գնահատում

ՈԱԱԿ-ն առաջնային կարևորություն է տալիս հավատարմագրման գործընթացի կազմակերպման շարունակական բարելավմանը: ՈԱԱԿ-ի կողմից իրականացված հավատարմագրման գործընթացի արդյունավետության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վերհանել լավագույն փորձը, բացահայտել գործընթացի փաստացի վիճակը, խնդիրներն ու բացթողումները, վերանայել ու կատարելագործել (ըստ նպատակների ու խնդիրների) փաստաթղթային հենքն ու գործընթացն ինքնին:

Հաշվետու տարում իրականացվել և ՈԱԱԿ-ի կայքէջում հրապարակել է 2015-2017թթ. իրականացված հավատարմագրման գործընթացների համակողմանի վերլուծությունը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել՝

- որքանով է ՄՈՒՀ-երի հավատարմագրումն իրականացվել հիմնավորված, անկախ և անկողմնակալ.
  - փորձագիտական զեկույցներն ըստ շահակիցների հուսալի են և հիմնավորված,
  - հավատարմագրման գործընթացները եղել են թափանցիկ և հստակ,
  - փորձագետները եղել են անկախ գնահատման, որոշման կայացման գործընթացներում և առհասարակ իրենց գործելաոճում,
- որքանով են հավատարմագրման արդյունքներն ընդունելի ՀՀ մասնագիտական կրթական համակարգի և միջազգային փորձագետների կողմից,
- որքանով են կանոնակարգերում, ՈԱԱԿ ընթացակարգերում և ձևաչափերում կատարված փոփոխությունները փոխկապակցված և հաշվի առնում գործընթացի ընթացքում առաջացող խնդիրներն և խոչընդոտները,
- որքանով է գործընթացն իրականանում Հավատարմագրման կարգի և սահմանված ժամանակացույցներին համապատասխան.
  - շահակիցները բավարարված են աշխատանքային ծանրաբեռնվածությունից և ՈԱԱԿ ձևաչափերից:

Հավատարմագրման գործընթացի համակողմանի վերլուծությունից զատ, յուրաքանչյուր տարի իրականացվում է առանձին գործընթացների արդյունավետության ուսումնասիրություններ: Ուսումնասիրությունն իրականացվում է անանուն հարցման միջոցով ՄՈՒՀ-երի, փորձագետների, համակարգողների և Հավատարմագրման հանձնաժողովի անդամների շրջանակներում, որին հաջորդում են ֆոկուս խմբային քննարկումները: Գործընթացների արդյունավետության գնահատումն իրականացվում է ըստ փուլերի՝

1. ինքնավերլուծության գործընթաց,
2. նախնական գնահատման գործընթաց,

3. փորձագիտական այց,
4. փորձագիտական զեկույցի պատրաստում:

Վերլուծության ժամանակ անդրադարձ է կատարվել նաև ՈԱԱԿ-ի կողմից փորձագետներին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին (օրենսդրական, նորմատիվ փաստաթղթեր, ուղենիշներ, ձևաչափեր և այլն): Բոլոր փորձագետները համարում են, որ տրամադրված փաստաթղթեր բավարար են արդյունավետ փորձաքննություն իրականացնելու համար:

Գնահատվում է նաև փաստաթղթերի նախնական ուսումնասիրման գործընթացի արդյունավետությանը, որը դիտարկվել է ըստ հետևյալ խնդիրների՝

- ընդհանուր պատկերացում կազմել ՄՈՒՀ-ի վերաբերյալ (100%),
- դուրս բերել հիմնախնդիրներ/հարցեր փորձագիտական այցի ընթացքում պարզաբանելու նպատակով (96.4%),
- պատրաստել փորձագիտական զեկույց (89.3%):

Ստացված տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ նախնական գնահատման գործընթացն արդյունավետ է կազմակերպվում: Փորձաքննության այս փուլը ծառայում է իր նպատակին, փորձագետները կարողանում են հաստատության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմել, գնահատել ուժեղ և թույլ կողմերը:

Փորձագետները գնահատել են նաև, թե ուսումնական հաստատություն կատարվող այցի ժամանակ որքանով են փորձագետների առջև դրված նպատակներն իրականացվել: Ուսումնասիրվել է իրականացված այցերի արդյունավետությունը (100%), հանդիպումների իրականացման ձևաչափի հարմարավետությունն ու օգտակարությունը տեղեկատվություն ստանալու տեսանկյունից (91%), հաստատության կողմից լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու պատրաստակամությունը (93%): Անդրադարձ է կատարվել նաև հանդիպումների օպտիմալ տևողությանը (45-60 րոպե): Փորձագետները գնահատել են նաև փորձագիտական զեկույցի ձևաչափը և դրա օգտակարությանը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձագետների 93% բավարարված է փորձագիտական խմբի զեկույցի ձևաչափով:

Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում

Արտաքին և ներքին գործընթացների պարբերական գնահատման, հավատարմագրման գործընթացի արդյունավետության վերլուծության, ինչպես նաև Հավատարմագրման հանձնաժողովի, տեղացի և միջազգային փորձագետների արձագանքների հիման վրա վերանայվել ու լրամշակվել են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացները կանոնակարգող մի շարք փաստաթղթեր:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ի արտաքին գնահատման արդյունքում ստացված խորհրդատվությունների հիման վրա մշակված թերությունների վերացման ծրագիր-ժամանակացույցին համապատասխան՝

1. վերանայվել/լրամշակվել են հավատարմագրման գործընթացը կանոնակարգող հետևյալ փաստաթղթերը և ձևաչափերը՝
   - ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի նախագիծը (հաստատումը նախատեսված է 2019թ.)

- Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգը (հաստատումը նախատեսված է 2019թ.),
- ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ձևաչափը,
- թերությունների վերացման ՄՈՒՀ-ի ծրագրի մշակման ձևաչափը,
- թերությունների վերացման ՄՈՒՀ-ի ծրագրի փորձագիտական գնահատման ձևաչաըփ և ռուբրիկները,
- մշակվել է փորձագիտական զեկույցների մշտադիտարկման ձևաչափն ու ընթացակարգը,
- մշակվել է թարգմանիչների ուղորդման փաթեթը,

2. առաջարկություններ են ներկայացվել «Բարձրագուն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծում,
3. մշակվել է հավատարմագրման հանձնաժողովի որոշումների բողոքարկման մեխանիզմի նախագիծը,
4. ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացման ուղենիշները,
5. մշակվել է միջոցառումների/վերապատրաստումների կազմակերպման և իրականացման կանոնակարգը,
6. ուսումնասիրվել է միջազգային փորձը բուհերի կատարողական արդյունքային ցուցանիշների ներդրման և դրանց հիման վրա պետության կողմից բուհերին ֆինանսավորման վերաբերյալ և ԿԳՆ առաջարկություններ են ներկայացվել,
7. հրապարակվել է 2015-2017թթ.-ին իրականացված հավատարմագրման գործընթացների արդյունավետության վերաբերյալ համապարփակ վերլուծությունը,
8. մշակվել է մարդկային ռեսուրսների կառավարման միջնաժամկետ պլան,
9. մշակվել է ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականություն և միջնաժամկետ պլան,
10. պատրաստվել և ENQA է ներկայացվել է ՈԱԱԿ-ի արտաքին գնահատման խորհրդատվությունների հիման վրա իրականացված բարելավումների միջնաժամկետ զեկույցը:

ՈԱԱԿ-ի կողմից իրականացված վերլուծությունների արդյունքները և փորձագետների դիտարկումները թույլ ն տալիս փաստել, որ կրթական համակարգի բարելավման և զարգացման գործում հավատարմագրման գործընթացի ազդեցությունը զգալի է:

Հաստատությունները հավատարմագրման գործընթացը համարում են արդյունավետ մեխանիզմ կառավարման արդյունավետությունը մեծացնելու, գործունեությունը կանոնակարգելու և հստակեցնելու տեսանկյունից: Փորձագիտական զեկույցները կարևոր դեր են խաղում բուհի թույլ, ուժեղ կողմերը և մատահրավերները բացահայտելու տեսնակյունից:

Տեղացի և միջազգային փորձագետների կարծիքով ՈԱԱԿ-ի կողմից իրականացված հավատարմագրման գործընթացները կազմակերպվել են բարձր պրոֆեսիոնալիզմով. միջազգային փորձագետները մասնավորապես գոհունակություն են հայտնել փորձագիտական խմբի ղեկավարների, համակարգողների պատրաստվածության վերաբերյալ:

3. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Հիմնադրվելու առաջին իսկ օրվանից ՈԱԱԿ-ն ակտիվ քայլեր է ձեռնարկել իր գործունեությունը միջազգայնացնելու և միջազգային կազմակերպությունների կողմից ճանաչում ձեռք բերելու ուղղությամբ՝ դրանով իսկ նպաստելով ՀՀ մասնագիտական կրթության դիրքերի ամրապնդմանը միջազգային մակարդակում:

Նպատակ 3.1. Հիմնադրամն անդամակցում է միջազգային ճանաչում ապահովող կառույցներին, մասնակցում ծրագրերին:

Այս նպատակին ուղղված հաշվետու տարում անհրաժեշտ էր՝

- ապահովել Հիմնադրամի անդամակցությունը միջազգային ճանաչում ունեցող կառույցներին:

2011թ.-ից ՈԱԱԿ-ը ներկայացված է Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQAAHE) կառավարման խորհրդում, 2016թ.-ից ԱՄՆ Բարձրագույն կրթության հավատարմագրման խորհրդի Որակի միջազգային խմբի (CIQG) անդամ է, 2017թ.-ից նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցի (CEENQA) անդամ է:

Իրականացված հավատարմագրման արդյունքները միջազգային մակարդակով ճանաչելի դարձնելու, ինչպես նաև ՀՀ կրթական համակարգի նկատմամբ միջազգային կառույցների վստահությունը բարձրացնելու նպատակով՝ ՈԱԱԿ-ը 2017թ.-ին դարձել է Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ և գրանցվել Որակի ապահովման եվրոպական գրանցամատյանում (EQAR): ENQA-ի կողմից արտաքին գնահատումը հավաստեց՝ որքանով են իրականացվող գործընթացները համապատասխանում Որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների (ESG) պահանջներին՝ ինչպես ՀՀ-ում որակի արտաքին ապահովման գործընթացների կազմակերպման, այնպես էլ ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման տեսանկյունից: Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը իրականացրել է իր գործունեության ինքնավերլուծություն՝ ներառյալ արտաքին գնահատման արդյունքում ստացված խորհրդատվությունների իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացրել Որակի ապահովման եվրոպական ասոցիացիային (ENQA): 2019թ.-ին զեկույցի ներկայացմանը կհաջորդի փորձագիտական խմբի անդամների այցը ՈԱԱԿ:

ՈԱԱԿ-ի միջազգայնացմանն ուղղված քայլերը 2018թ. շարունակվել են.

- ՈԱԱԿ-ն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել INQAAHE, ENQA միջազգային ցանցերի աշխատանքներին, զեկուցմամբ հանդես եկել INQAAHE-ի համաժողովում և EQAF-ում (Որակի ապահովման եվրոպական ֆորում),
- ակտիվ համագործակցում է Եվրամիության և նախկին Խորհրդային միության երկրների որակի արտաքին ապահովման գործակալությունների հետ:

Հաշվետու տարվա մայիսին ՈԱԱԿ-ի ներկայացուցիչները Լիոնում մասնակցել են «Եվրոպական ինտեգրմանը համահունչ բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի որակի ապահովման համակարգի ներդրում՝ խթանելու հետազոտությունների միջազգայնացումը»

(C3QA) ծրագրի շրջանակներում տեղի ունեցած աշխատաժողովին: Համաժողովի ընթացքում անդրադարձ է կատարվել կրթության 3-րդ աստիճանի որակի ապահովմանը եվրոպական երկրներում, ներկայացվել է որակի ապահովման գործիքակազմի կիրառման տարբեր երկրների փորձը: ՈԱԱԿ-ի ներկայացուցիչները զեկույցի և աշխատաժողովի միջոցով ներկայացրել են Հայաստանի փորձը ինչպես որակի ապահովման գործիքակազմի կիրառման, այնպես էլ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում որակի ապահովման չափանիշների և ուղենիշների տեսանկյունից: Որպես լավագույն փորձ՝ ներկայացվել է նաև Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիային (ENQA) ՈԱԱԿ-ի անդամակցության գործընթացը և արդյունքները:

2018թ.-ի հոկտեմբերին ՈԱԱԿ-ի ներկայացուցիչներն Աստանայում մասնակցել են Էրազմուս+ C3QA ծրագրի շահակիցների համաժողովին: Համաժողովի մասնակիցները քննարկել են տարբեր երկրներում կիրառվող կրթության երրորդ աստիճանի որակի ապահովման քաղաքականությունը և համակարգը: Բազմակողմանի անդրադարձ է կատարվել ասպիրանտական կրթության որակի թե ներքին, թե արտաքին ապահովման մոտեցումներին, դիտարկվել են առկա փորձը, մարտահրավերները և լուծման հնարավոր ուղիները: Համաժողովի ընթացքում ՈԱԱԿ ներկայացուցիչները երեք զեկույցներով են հադես եկել՝ ներկայացնելով թե ՈԱԱԿ-ի մոտեցումը քննարկվող հարցերի վերաբերյալ, թե Կենտրոնի քաղաքականությունն ու փորձը ոլորտում:

2018թ.-ի հոկտեմբերին Աստանայում ընթացող Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանցի (ENQA) 9-րդ ընդհանուր համաժողովի ընթացքում ներկայացվել է ՈԱԱԿ-ի կողմից ՏԵՄՊՈՒՍ-ի VERITAS ծրագրի շրջանակներում մշակված և 11 բուհերում փորձարկված ասպիրանտական կրթության որակի ապահովման չափանիշներն ու չափորոշիչները: Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի համաժողովի ժամանակ ՈԱԱԿ-ի թիմը միջազգային հանրությանն է ներկայացրել նաև բուհ-գործատու համագործակցության մոդելը և ձեռքբերված հաջողությունները: Որպես հաջորդ վեհաժողովի հյուրնկալ և համակազմակերպիչ՝ ՈԱԱԿ-ի պատվիրակությունը ENQA անդամներին ներկայացրել է նաև Հայաստանը և ՈԱԱԿ-ի 10-ամյա գործունեությունը:

ENQA-ի համաժողովի ընթացքում ՈԱԱԿ-ը բանակցություններ է սկսել այնպիսի գործակալությունների հետ, որոնք իրենց երկրներում տեղայնացրել են բժշկական կրթության հավատարմագրման միջազգային չափանիշները: Այդպիսի կազմակերպություններից է Ղազաստանի Կրթության և առողջապահություն որակի ապահովման և հավատարմագրման եվրասիական կենտրոնը (ECAQA): Կենտրոնի հետ նախապատրաստվում է ստորագրել համագործակցության հուշագիր 2019թ.-ի գարնանը: Հուշագրով նախատեսվում է համագործակցություն հետևյալ ուղղություններով՝

1. ECAQA-ն կիսվելու է իր մշակումներով և փորձով՝ բժշկակական կրթության հավատարմագրման միջազգային չափանիշների տեղայնացման վերաբերյալ:
2. Կազմակերպությունները փոխանակվելու են բժշկության և առողջապահական մասնագիտական կրթության հավատարմագրման փորձերով:

Միջազգային ծրագրերի (Էրազմուս+) շրջանակներում ՈԱԱԿ-ի անձնակազմը հնարավորություն է ունեցել մասնակցելու մի շարք մշակումների/ վերապատրաստումների ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրում: Վերապատրաստումների արդյունքում ՈԱԱԿ-

ում ձևավորվել է համապատասխան ներուժ, որը նպաստում է հավատարմագրման գործընթացների արդյունավետ իրականացմանն, ինչպես նաև որակի մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Նպատակ 3.2. Հիմնադրամն իրականացրել է ՄՈՒՀ-երի գնահատում արտերկրում և իր մատուցած ծառայությունների որակով չի զիջում նմանատիպ եվրոպական գործակալություններին:

Այս նպատակին ուղղված հաշվետու տարում անհրաժեշտ էր՝

- ձևավորել պահանջարկ Հիմնադրամի ծառայությունների նկատմամբ և սկսել օտարերկրյա ՄՈՒՀ-երի գնահատում,
- իրականացնել համատեղ գնահատումներ միջազգային ճանաչում ունեցող այլ կառույցների հետ:

Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամակցությունը ՈԱԱԿ-ը պլանավորում է օգտագործել օտարերկրյա մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրում իրականացնելու համար: Համանման կառույցների միջազգային հավատարմագրման փորձի ուսումնասիրությունների հիման վրա մշակվել է համապատասխան փաստաթղթերի փաթեթը. օտարերկրյա ՄՈՒՀ-երի հավատարմագրման ընթացակարգը, գնային քաղաքականությունը, փորձագետների ներգրավման կարգը և այլն: Այդ փաստաթղթերը ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհրդի հաստատումից հետո կդրվեն գործառության մեջ:

Ռազմավարական մյուս խնդիրն է հավատարմագրման այլ կառույցների հետ համատեղ գնահատումների իրականացումը: ՈԱԱԿ-ն ունի համատեղ գնահատումների փորձ Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպության (NVAO) և Գերմանիայի բնական գիտությունների, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի որակի ապահովման կենտրոնի (ASIIN) հետ:

ՈԱԱԿ-ը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցի (CEENQA) անդամակցության շրջանակներում արտաքին գնահատում է իրականացրել Ուկրաինայի Չեռնովցի ազգային համալսարանում: Դիտարկվում են երկու մասնագիտության կրթական ծրագրեր՝ «Կիրառական մաթեմատիկա» և «Անգլերեն լեզու և գրականություն»: Արտաքին գնահատում իրականացնող փորձագիտական խմբում ՈԱԱԿ-ի ներկայացուցիչները ընդգրկված են եղել որպես միջազգային փորձագետներ և արտաքին գնահատման գործընթացի համակարգող:

Ներկայումս ՈԱԱԿ-ն առաջարկ է ստացել ՌԴ Հավատարմագրման ազգային գործակալությունից (Росаккредагенство) ռուսաստանյան փորձագետների համար վերապատրաստումների կազմակերպման և համատեղ հավատարմագրումների իրականացման վերաբերյալ: Առայժմ համագործակցությունը սահմանափակվում է փորձագետների փոխանակման գործընթացով: Նմանատիպ համագործակցության պայմանավորվածություն կա նաև Վրաստանի Կրթության որակի բարելավման ազգային կենտրոնի (NCEQE) հետ:

Որակի ապահովման միջազգային կառույցներին անդամակցությունը և նրանց հետ սերտ համագործակցությունը մեծացրել են ՈԱԱԿ-ի տարածաշրջանային ազդեցությունը: Համագործակցության պլաններ են մշակվում ՌԴ, Ղազախստանի, Վրաստանի հետ համատեղ գործողությունների վերաբերյալ: ԼՂՀ Կրթության, գիտության և սպորտի նախարարության աջակցությամբ Արցախի բուհերում որակի ապահովման համակարգերի ներդրմանն ուղղված վերապատրաստումներ և խորհրդատվություններ են իրականացվել:

4. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

2018թ.-ին տեղի ունեցավ որակի ապահովման չորրորդ ֆորումը «Որակը լսարանում՝ գնահատման համակարգի բարելավում» թեմայով: Ավանդական դարձած այսպիսի համաժողովների ժամանակ քննարկվում են մասնագիտական կրթության համակարգի զարգացման միտումներն, առկա ձեռքբերումները և մարտահրավերները: Ֆորումին մասնակցել են ՀՀ բոլոր ՄՈՒՀ-երի կառավարիչներ և դասախոսական կազմի ներկայացուցիչներ, գործատուներ և ուսանողներ, միջազգային փորձագետներ և հյուրեր:

Հավատարմագրման գործընթացների ՈԱԱԿ-ի կողմից իրականացրած վերլուծության արդյունքում վերհանված և ֆորումի ժամանակ բարձրաձայնված խնդիրներից հատկանշական են հետևյալները.

- Մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից առաջարկվող կրթական ծրագրերի փոփոխություններով հանդերձ՝ ոչ բոլոր ծրագրերն են բավարար արդիական, իսկ իրականացումը՝ ուսանողակենտրոն: Հաստատությունները բավարար չեն հետևում ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքների համապատասխանությանը ՈԱՇ-ի, նաև աշխատաշուկայի պահանջներին: Քիչ են ճկուն կրթական ծրագրերը, կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը լիարժեք չի գործում, դասավանդման մեթոդների արդիականացումը դանդաղ է ընթանում:
- Հաստատություններն, օգտվելով օրենսդրական այն դրույթից, որ ծրագրային հավատարմագրումը կամավոր գործընթաց է, դեռևս չեն դիմում ծրագրային հավատարմագրման, որտեղ անմիջականորեն կգնահատվեն ուսանողի մասնագետ դառնալու գործընթացում առկա խնդիրներն ու խոչընդոտները և կհավաստվի մասնագետների մրցունակությունը տեղական և միջազգային աշխատաշուկաներում: ՈԱԱԿ-ի առաջարկի հիման վրա նախատեսվող կրթական ծրագրերի /ծրագրերի խմբի/ հավատարմագրման պարտադիր պահանջի ներդրումը թույլ կտա բարելավել կրթության տարբեր բաղադրիչները և ունենալ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող ժամանակակից ծրագրեր:
- Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման չդիմելու հիմնական պատճառը, ըստ հաստատությունների ղեկավարության, ֆինանսական միջոցների բացակայությունն է:
- Չնայած որոշակի առաջընթացին՝ մասնագիտական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքներն, այդ թվում՝ որակի ապահովման ստորաբաժանումները, դեռևս չունեն բավարար անկախություն և ֆինանսական ինքնավարություն, կառավարումը մեծ մասամբ չի

իրականացվում ՊԻՍԲ /Պլանավորում-Իրականացում-Ստուգում-Բարելավում/ որակի կառավարման սկզբունքով:

- Բուհերում և ՄԿՈՒ հաստատություններում առկա է դասախոսական անձնակազմի սերնդափոխության խնդիր: Աշխատող պրոֆեսորադասախոսական կազմը երբեմն չի բավարարում վերափոխված կրթական ծրագրերի պահանջներին, չի տիրապետում դասավանդման ժամանակակից մեթոդների, բավարար չափով ներգրավված չէ հետազոտություններում: Ուսումնական հաստատությունները բավարար պայմաններ չեն ստեղծում դասախոսական կազմի վերապատրաստման և երիտասարդացման համար:
- Հաստատությունների ուսումնական և առանձնապես հետազոտական բազաները հիմնականում հնաոճ են և միշտ չէ, որ բավարար են հատկապես մագիստրոսական ծրագրերի իրականացման և ակնկալվող մասնագիտական վերջնարդյունքների ձևավորման համար: Կրթական և հետազոտական գործունեությունները լիարժեք փոխկապակցելու խնդիրներ կան:
- Բուհերում որակի ապահովումը դեռևս չի դարձել մշակույթ, դասախոսական կազմի մի մասը որակի ապահովման գործընթացները դիտարկում է որպես լրացուցիչ ծանրաբեռնվածություն, դեռևս ցածր է շահակիցների և հեղինակություն վայելող դասախոսների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին: ՄԿՈՒ հաստատություններում հաստատություններում որակի ապահովման համակարգը ներդրման սկսզբնափուլում է:
- Մամուլը և ԶԼՄ-ները 2018թ.-ի իրադարձությունների ֆոնի վրա պակասեցրեցին ուշադրությունը կրթական խնդիրների նկատմամբ: Ավելին, տարեսկզբին դադարեց հեռարձակվել «Կենտրոն» հեռուստաընկերության «Կենտրոնի առավոտը», իսկ տարեվերջին՝ Հանրային ռադիոյի «Գտիր քո բուհը» և «Հանրային կարծիքի ուսումնասիրման կենտրոն» հաղորդաշարերը, որոնցից մեկը մասնագիտացած էր կրթության ոլորտում, իսկ մյուս երկուսը մեծ տեղ էին հատկացնում կրթական թեմաներին: